



ԹԱԴ. ԱԻԴԱԼԲԵԳՅԱՆ

891.99.092 [Արդյան]

է 78

ԽԱԶԱՏՈՒԻՐ Ա.ԲՈՎԵԱՆ

(Պատմական-դրական վերլուծութիւն)

ԹԱՀ 207



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԻ ԱՐԺԱՎՈՐ ՎԱՐՉՈՒՅԹ ՅՈՒՆԱՅԻՆ
1910 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



38092 ԱՀ.

Արտապահ «Արարատ» ամսագրից

21059 - 6v

Վ. Ա. Դ. Ա. Բ Շ Ա. Պ Ա. Տ

Տպարան Մայր Արքունյ Ս. Էջմիածնի

ԽԱԶԱՏՈՒՐ Ա.ԲՈՎԵԱՆ

I

Խաչ. Աբովեանի, ինչպէս և մեր բոլոր հեղինակների, երկերն ուսումնասիրելու ժամանակ ոմանք ուշադրութիւն են գարձնում՝ գրուածքի տեխնիկայի, ոմանք՝ գեղարուեստական լինելու, միւսները՝ լեզուի, ուրիշները՝ ոճի վերայ և այլն. սակայն մինչև այժմ ամենեին նպատակ չեն գրել պարզաբանելու, թէ ինչ կապ կայ մի կողմից՝ երկերի բովանդակութեան ու հեղինակի աշխարհահայեցքի և միւս կողմից՝ հասարակական զարգացման, աւելի որոշ ասենք, տնտեսական առաջադիմութեան և հասարակական խմբերի դրութեան ու յարաբերութեան միջև։

Շատերը հէնց վերջին խնդրի համար կարող են առարկել ու հարց տալ, թէ արդեօք այդպիսի կապ գոյութիւն ունի։ Միթէ որ և է առընչութիւն ունեն հպարտ ֆէոդալի արիւնոտ սուրն ու շառաչող մտրակը, քրտնաջան երկրագործի փայլուն արօրն ու հատու բահը, ընչափաղց առևտրականի արագասահ արշինն ու աղմկող համրիչը, հեռատես արդիւնաբերողի անդուլ մեքենան և մրոտ բանւորի ջլուտ բազուկը պատմագրի՝ արհաւիրքներով լի գրուածքի, բանաստեղ-

ծի ոլորուն ու անուշ երգի, վիպասանի հրապութիշ ըսմանի և թատերագրի ցնցող դրամայի հետ-

Առնչութիւն ունեն և այն էլ շատ մեծ, սակայն այս աչքի չէ ընկնում ի միջի այլոց նաև այն պատճառով, որ գրականութեան պատմագիրները իւրաքանչիւր հեղինակին վերցնում են առանձնակի, չէզոքացրած դրութեամբ և չեն գործադրում բոլոր գիտութիւնների մէջ ընդունուած ուսումնասիրութեան մի մեթոդ—համեմատականը, որը խօզն երեան է հանում նախ՝ տարբեր շրջանների երկերի ընդհանուր ու էտական յատկութիւնները և երկրորդ՝ նրանց ու միջավայրի դրութեան կապը:

Եթէ համեմատենք երկար ժամանակամիջոցում երեան եկող բազմաթիւ հեղինակների, կնկատենք, որ գրականութիւնը կարելի է բաժանել, օրինակ, այսպիսի շրջանների, մի շրջան, երբ երկերի բովանդակութիւնը և իդէալները վերցուած են ազնուական (աշխարհիկ և հոգեոր) դասակարգի կեանքից, մի ուրիշ շրջան, երբ հետաքրքրութեան կենդրունը գիւղացիութիւնն է, երրորդ, երբ ուշադրութիւն են դարձնում քաղաքային ազգաբնակութեան, մասնաւորապէս նրա մի տարբի—առետրականների ու արդիւնաբերողների վերայ, և ապա չորրորդ, երբ գրողին նիւթ ու աշխարհահայեացք է մատակարարում բանւորութիւնը, Գրականութեան մէջ այդ փառաը գիտելուց յետոյ եթէ աշխատենք հասարակական կեանքն աւուումնասիրել, կտեսնենք, որ

վերջինս էլ ունի ֆաղեր, երբ այդ դասակարգերը
նոյն կարգով հզօրանալով յաջորդում են միմեանց։
Այնուհետև մեր ուշադրութիւնը կ'գրաւի հետեւալ իրողութիւնը. այն է, որ հասարակական
կեանքի մէջ որևէ դասակարգի հզօրանալը միշտ
ժամանակադրական կարգով աւելի առաջ է ընկնում,
քան նոյն դասակարգի պատկերացումն
ու իդէալների արտայայտումը գրականութեան
մէջ։ Այս ապացուցանում է նախ այն, որ ժողովրդի տնտեսական—սոցիալական զարգացումը
և գրականութիւնը մեծ կապ ունեն միմեանց
հետ և երկրորդ, որ տնտեսական—սոցիալական
առաջադիմութիւնն է գրականութեան զարգաց-
ման պատճառը և ոչ ընդհակառակը։ Եթէ վեր-
ջինը լինէր, պարզ է, որ առաջ պէտք է գրա-
կանութիւնը փոփոխուէր և յետոյ կեանքը, որով-
հետև պատճառը միշտ նախորդում է հետեւանքին։

Ասածներից հետեւում է, որ գրականութեան
որ և է ճիւղի մի փոքրիկ օղակը կազմող իւրա-
քանչիւր երկի քըննութեան ժամանակ հետազո-
տութիւնը պէտք է սկսել իրբե պատճառ ներկա-
յացող հանգամանքների, այն է՝ սոցիալական
միջավայրի ուսումնասիրութիւնից և ապա անց-
նել հետեւանքին, այսինքն երկի բովանդակու-
թեանն ու հեղինակի՝ դէպի ժամանակակից
կեանքի երեսյթներն ունեցած վերաբերմունքին։

Այս տեսակէտով էլ առաջնորդուելով անց-
նենք Աբովեանի գլուխ-գործոցի—«Վէրք Հայա-
տանի» համառօտ վերլուծութեանը։

Աբովեանը ծնուել է 1804—1805 թուականին, իսկ «Վէրք Հայաստանին» գրուած պատրաստ է եղել 1841-ին։ Նշանակում է վեպի գրութեան ժամանակ հեղինակը ազդուած է եղել 19-րդ դարի առաջին տասնամեակների հայ հասարակութեան կեանքից։ Իսկ այս ժամանակ ինչ դասակարգեր գոյութիւն ունէին հայ աշխարհ հում և ինչ գրութեամբ։

Քաղաքական կեանքի փրփրագեղ յորձանքները, օտարազգերի՝ դարեր շարունակ տևող հալածանքը արդէն վազուց խորտակել էին այն ամբարտակը, որի անունն էր հայ ազնուականութիւն։ Հին հայ կեանքի տիրապետող երկու դասակարգերից մնացել էր միմիայն հոգեորականութիւնը։

Կար մի ժամանակ, երբ հոգեորականութիւնը հզօր էր ոչ միայն թուով, այլ և տնտեսապէս Վանքերն ու եկեղեցիները ունէին իրենց ընդարձակ կալուածները, հոգեորականութիւնը հարուստ էր, որովհետեւ ստանում էր ոչ միայն եկեղեցուն պատկանող կալուածների արդիւնքը, այլ և մեծ բաժին բոլոր պատերազմների հարուստ աւարից, առատ նուէլներ ապնուական դասից և ոչ նուազ տուրքեր ժողովրդի միւս շերտերից։ Տնտեսապէս հզօրութիւնը պատճառ էր նրա մեծ

ազգեցութեանը նաև ոչ—հոգեոր, քաղաքական
և հասարակական ասպարիզում:

Իսկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջաննում:
Նա ընկած է տնտեսապէս, որովհետեւ զրկուել է
այն բոլոր կալուսածներից, որոնք մի ժամանակ
պատկանում էին եկեղեցիներին: Վանքերի ըն-
դարձակ գոյքերից համարեա ոչինչ չէ մնացել:
Ազնուական գասակարգի ոչնչանալը զըրկելէ նրան
եկամուտի նշանաւոր աղքիւրից: Նրան կերակ-
րում է հասարակ ժողովուրդը, գլխաւորապէս
գիւղացիութիւնը, որի համար չէր կարող զգալի
չինել այդ ծանրութիւնը:

Մարդ չէ կարող առանց մեծ յուզմունքի
կարգալ Յարութիւն Արարատեանի ինքնակեն-
սագրութեան այն էջերը, որուեղ նկարագրուած
են գիւղական հասարակութեան հետ շփումն ու-
նեցող վարդապետների անգթութիւնները: Թէե
այդ նկարագրութիւնը վերաբերում է 18-րդ դա-
րի վերջին տարիներին, բայց այնուամենայնիւ
առանց սխալների մէջ ընկնելու կարելի է նոյնը
տաել նաև մի երկու տասնամեակ յետոյ եկող
ժամանակամիջոցի համար, որովհետեւ տնհաւա-
նական է կարծել, որ այնքան կարճ միջոցում,
այն էլ պարսկական տիրապենութեան ժամա-
նակ, հասարակական խմբերը իրանց ուակը վոչ
խէին զգալի կերպով: Պոօշեանը իւր վէպերում
պատկերացնում է մի քանի այդպիսի հոգեո-
րական գէմքեր, և հերոսներից մէկի բերանով
նկատում, որ նրանք աւելի խիստ էին վարւում

գիւղացիների հետ, քան պետական պաշտօնեաները։ Նատ ընական է, որ ժողովուրդը, դլիսաւորապէս գիւղացիութիւնը պէտք է դժգոհութիւն, երբեմն և ատելութիւն արտայայտէր դէպի հոգեսրականութիւնը, որ հանդէս էր գալիս իբրև հարկառու գասակարգ։

Տնտեսական անկմանը ուղեկից էր մտաւոր անկումը։ Այս շրջանին վերաբերող գրուածքները շատ մռայլ գոյներով են պատկերացնում այն ժամանակուայ բարձր ու ստորին հոգեսրականեներին։ Զկար այլ ևս այն գրասիրութիւնը, այն հմտութիւնը, որ յատուկ էր հին հայ հոգեսրականներին, որոնց ձեռքում կենդրոնացած էր գրականութիւնը, և որոնք ինքնուրոյն ու թարգմանական բազմաթիւ երկերով ճոխացնում էին հայրենի գպրութիւնը։ Արովեանը այն ժամանակուայ մասին նկատում է.

«Ալբբենը մեր միջումը գարով (ալարանով) էին բըռնում և գիւլլով վէր քցում»։ *

Էջմիածնի վանքում քչերն էին յայտնի իբրև «գիտնականներ», իսկ մնացած մեծամասնութիւնը համարեա նոյն աստիճանի վրայ էր գտնւում, ինչ որ գիւղական քահանաները։ Իսկ վերջիններիս գրութեան մասին լիովին գաղափար կաղմելու համար բաւական է կարդալ Արովեանի

*) Խայատուր Արովեան, «Վերը Հայաստանի»։ Թիֆլիս, 1908։ Հրատ. Բագուայ Հայ. Կուլտուր. Միութեան։ Յառաջարան հեղինակի։ Երես Ը.։

վէպի հետևեալ հատուածը, որի մէջ երդիծանքն ու կարեկցութիւնը խառնուած են իրար։

«Դրի սևն ու սիպտակը տէրտէրներն էլ բռանց (հազիւ) էին ջոկում, աւետարան կարգալիս հազար անգամ եա չէշմակը դղում, եա տիրացվի, մղդսու վրայ բարկանում, եա գրակալը դօշներին քաշում, եա գլուխերես դրբի միջումը կորցնում, մէկ պստիկ մոմ էլ ձեռներն առնում, եա մօնթի գլխին խփում, որ մօմը դուզ բռնի։ Նատ անգամ էլ որդիանց որդի մէկ փիս, անմարս, դժարատամ, գլուխ կոտրող բառ էլ որ չէր ռաստ գալիս, հէնց գիտես թէ սատանի թամբը կորաւ, շատ կռանալուցը, մոմը մօտ բռնելուցը եա գիրքն էր էրուում, եա նրա միրուքը։ Ամա էսպէս բառեր վարաւուրդ էին արել, մօտանալիս կամ գլխովն էին պտըտում, կամ մէկ գիրն ասում, միւսը կուլ տալիս, եա թէ չէ Մը-ը սուրբ կարդալու տեղ սոխ կամ սխտոր ասում, Մը-ը սաղմոս ասելու տեղ՝ զորաց, ու ժամ օրհնողն էլ եա չօռ էր ասում, եա չէ լսում։ Մէկ գիր պակաս ժամանակին հօ Աստուած հեռու տանի, ժամ ու ժողովուրդ, տէրտէր, տիրացու իրար գլխով էին դիպչում։ ամեն բերնից էնպէս մէկ խօսք էր դուս գալիս, որ զուռնի փոխանակ դափ էին ածում, մի տեղ ցխաւելը եա քշոցը կարդացողի ձեռը տալիս, տպողին օրհնում, կազմողին գովում ու գէջդանգէջ (վերջ ի վերջոյ) պրծնելիս Աստծուն էնքան իրանց հոգու համար շնորհակալութիւն

չանում, որքան գլորից, աւետարանից ազատուեալու խաթեր» . . .*)

Արանց վերայ եթէ աւելացնենք նաև այն, որ նրանք գժուարութեամբ էին տեղի տալիս նոր կուլտուրայի պահանջներին, որովհետեւ շահագրգուած չէին այդ կուլտուրայի ներմուծումով, — ապա, կարծում ենք, պարզ կը լինի այն ժամանակուայ հոգն որտեղանութեան գրութիւնը և դեւքը ժողովրդի առաջադիմութեան գործում։

III

Երկրորդ գասակարգը վաճառականութիւնն էր։

Հայոց պատմութեան համար շատ մեծ, նայն իսկ վճռական նշանակութիւնն է ունեցել այս գասակարգի երեան գալը, որը բոյն դնելով եւրոպայի, Թուրքիայի, Ռուսիայի, Պարսկաստանի և Հնդկաստանի շահաստան քաղաքներում՝ համեմատաբար զօրեղանումն է տնտեսապէս և պատճառնում հայոց նոր քաղաքակրթութեան զարգացման։ Տպագրութիւնը, գրականութիւնը, յետոյ և մամուլը զարգացան այդ կենդրաններում։ Առաջին անգամ այս գասակարգը շփուելով ու մրցելով օտար կրթուած, ախտյեանների հետ պէտք է զգար իւր և իւր հայսենակիցների մտաւոր սնանկութիւնը և խորհեր այդ մասին։ Այս գիտակցութեանը հետեւամ է հայ հարուստների

*) Խաչատոր Արով, Կը, 49—20.

ձեռքով մի շարք դպրոցների բացումը Մոսկուայում, Աստրախանում, Վենետիկում և այլն Թուրքիայի քաղաքներից Զմիւռնան ու Պոլիսը, որոնք տաճկահայ վաճառականութեան ամենաշանաւոր կենդրոններն են, իրանց բարբառը դարձնում են գրական լեզու, Խուսիայում յաղթող է հանդիսանում Արարատեան բարբառը միայն ու միմիայն չնորհիւ այն հանգամանքի, որ ռուսահայ ամենանշանաւոր առևտրական կենդրոնները — Աստրախանը, Մոսկուան և մանաւոնդ Թիֆլիսը նրա լեզուական կուսակիցներն էին։ Անկասկած Արարատեան բարբառը երբէք չէր յաղթանակի արեելքում, եթէ անտեսապէս զարգացած կենդրոնները արևմտախօս լինէին։ Կարելի էր գեռ երկար շարունակել վաճառականութեան և կուլտուրայի զանազան կողմերի զարգացման կապը, բայց մենք բաւականանք այսքանով և ուշադրութեան առնենք, հետեւալ իրողութիւնը։

Գուցէ ընթերցողը ինքն էլ նկատեց, որ վերոյիշեալ բոլոր նշանաւոր վաճառային կենդրոնները դանւում են բուն երկրից դուրս Բնականաբար կարելի է հետաքրքրուել թէ ինչու է այդպէս կուլտուրայի՝ հայրենքից դուրս զարգանալը պատահականութեան արդիւնք է, թէ մի ուրիշ պատճառ էլ գոյութիւն ունի։ Պատճառը երկրում տիրող քաղաքական հանգամանքներն էին, որոնք թոյլ չէին տալիս, որ վաճառականութիւնը զարգանայ ներսում։ Դեռ մինչեւ

այժմ էլ բուն երկիրը չունի այնպիսի քաղաքներ,
որոնք կարողանային մրցել հայրենիքից գուրս
գտնուող հայ առևտրական կենդրունների հետ։

Հայ հասարակութեան սոցիալական խմբերի
փոխ յարաբերութիւնը ճիշդ պատկերացնելու
համար պէտք է յիշել, որ այն ժամանակամիջու-
ցում առևտրական դասակարգի առանձին ներ-
կայացուցիչների ազգեցութիւնը թէև կարող էր
աչքի ընկնող լինել կուլտուրական գործերում,
բայց այնուամենայնիւ վաճառականութիւնը իբ-
րև հասարակական մի տարր գեռ ևս թոյլ էր։
Այս էր պատճառը, որ նա գրականութեան վե-
րայ չթողեց այն ազգեցութիւնը, ինչ որ պիտի
անէր 19-րդ դարի երկրորդ յիսնամեակին։

IV

Երրորդ դասակարգը—գիւղացիութիւնը ար-
դէն վաղուց ազատուել էր բնիկ ազնուականների
ծանր, շատ ծանր ճնշումից Երկրի զանազան մա-
սերում նա իւր հողի տէրն էր և միմիայն հար-
կերով էր կապուած տիրող ազգերի կառավա-
րութեան հետ։ Որքան էլ որ ծանր լինէին օտար-
ների ճնշումները, այնուամենայնիւ գիւղացիք
իրենց տընտեսապէս աւելի թեթեացած պիտի
զգային, քան նախկին ֆէոդալների իշխանու-
թեան ժամանակ։ *) Որ գիւղացիութիւնը շատ

*) Խօսելով նին հայերի մասին՝ Վահան վարդ. Բաւ-
առամեանը նկատում է. «Մենք չենք տեսնում ժողովրդի կող-

թշուառ գրութեան մէջ չեր գտնւում, ցոյց է տալիս Աքսվեանի վկայութիւնը իւր հայրենակիցների մասին, որոնք անմիջապէս Երևանի Սարդարի քթի տակ լինելով բնականաբար աւելի ենթակայ պիտի լինէին պարսիկների կեղեքում ներին, Զնայած վերջին հանդամանքին՝ ահա ինչ ենք կարգում Քանաքեռոց մասին «Վէրը Հայոտանի»ում։

«Տունն ու շիրախանէն հազար բարութիւնով լիքը՝ տրաքում էին, ու Աստուծոյ հոգի կար միջներում. մէկ օձի ձուն էր պակաս նրանց տանիցը, Դիեին կարասներով շարած, ամբարը հացով լիքը, կթի կովս ու գոմէջները՝ ֆորթ ու ձագը տակըներին՝ գոմումը կապած, քեահլանձին թաւլումը, գութանը գուանը լծած, մառանը ևմիշով, կախանով, տանձ ու խնձորով խըլթիլթում և մտնողին հոտը տեղն ու տեղը բռնում, շշմացնում էր . . . Որը էրկու որը երեք բազունէր, նոքար, հօտազ գուանը հազիր, ու տաններսն ու պուճախը գրմբում էր կարասներով կողակ, կճճներով պանիր ու զաւուրմա, աքաշներով զոխ, բոխ, ոզորմակոթ, բղըղներով եղ ու կարագ, մոթալներով պանիր,—ձով, ինչ տուն, Տասը զոնազ որ էն սհամբը նրա գուանը վէր գային, սազ ամիս ուտէին, խմէին, կոտրէին, ջարդէին, փչացնէին, նրա տան խէրն ու բարա-

միջ մի նշան նարստութեան», Մխիթար Գոշի «Դատաստանակիրը Հայոց» Վաղարշապատ, 1880, Յառաջարանութիւն հրատարակի, եր. 65.

քեաթը հա կար, հա կար . . . Շատը սուրու-
յով ոչխար էլ էին պահում: . . . Նրանց կնանոն-
ցը որ մտիկ տայիր, խելքդ կերթար, խասի
ու զումաշի միջում կորած էին: . . . Ամեն մէկի
կնիկն ու աղջիկը հէնց իմանաս խանզագա ու
բէզզագա ըլէր»: *)

Այն ժամանակուայ գիւղացիների տնտեսու-
թեան ուսումնասիրութիւնը շարունակելով հան-
դիպում ենք խոշոր նշանակութիւն ունեցող հե-
տեեալ փառտին, այն է, որ 19-րդ դարի առա-
ջին տասնամեակների ընթացքում գիւղերում
տիրում է փակ տնտեսութիւնը, մի տնտեսու-
թիւն, որի արտադրած նիւթերը ընդհանրապէս
շուկայի երես չեն տեսնում, այլ պահում են
սեփական կարիքներին բաւարարութիւն տալու
համար: Այս հաստատում է դարձեալ Արովեանը:
Թէև սա մի տեղ յիշում է. «Ճնպէս մարդ կար,
որ տարէնը էրկու հարիր, իրեք հարիր լիտր
տանձ, խնձոր, ծիրան ծախում էր»: **)—որով
կարծէք թէ հակասում է մեր ասածին, բայց
հէնց քիչ յետոյ շատ որոշ գրում է.

«Մէկ փարի բան բազարիցը տուն չէր գալ,
բացի իրանց հագնելու շորիցը. Էն էլ կտաւ,
շապկացու, չուխացու շատը հարսներն էին ու
աղջկերքն էին նրանց համար մանում, գործում,
կարում»: ***)

*) «Վէրք Հայաստանի». եր. 54—56:

**) Նոյնը. եր. 55:

***) Նոյնը. եր. 55:

Պարզ է, որ իրերի այսպիսի դրութիւն կարող է գոյս թիւն ունենալ այնտեղ, որտեղ տիրապետողը փակ տնտեսութիւնն է։ Դիւղը գեռշատ չնշին կապերով է ազգւում քաղաքից։

Մի ուրիշ գիծ։ Տնտեսութեան այսպիսի դրութեան ժամանակ գիւղում գեռ ևս պահպանած է լինում իւր կենսունակութիւնը նահապետական մեծ գերդաստանը։

«Նատը չորս-հինգ հարսն ունէր տանը»,
ասում է հեղինակը։*)

Անցնենք։ Երբ քաղաքային ազգաբնակութիւնը շատ թոյլ է զարդացած, այն ժամանակ գիւղական ազգաբնակութեան մեծ մասը իւր կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ չէ կարողանում իւր բերքերի համար սպառողներ գտնել, եթէ գիւղացին իւր կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ աւելացածը մտածէ պահել, ոչ մի օգուտ չի ստանայ. նախ այն պատճառով, որ այդ բերքերը միւս գիւղացիներին պէտք չեն գայ, որովհետեւ նրանք էլ ունեն, և երկրորդ, որ նոյն բերքերը կարճ ժամանակից յետոյ կարող են փշանաք։ Սրանից առաջանում է փակ տնտեսութեան ժամանակ գիւղացու առատաձեռնութիւնը։**) Այս առատաձեռնու-

*) «Վերը Հայաստանի», եր. 55.

**) Նման արծիրի ենք ճանդիպում յայտնի սոցիոլոգ-պատմագիւռ Կ. Կառւցկու մի նոր աշխատութեան մէջ. որտեղ խօսելով հին հռովմայեցոց հարուստների մասին նկատում է. «Հարստութեան կենդրոնացումը մի քանի ծեռքե-

թիւնը կրացակայէր, եթէ քաղաքային ազգաբնակութիւնը բաւականաշափ զարգացած լինէր, որովհետեւ գիւղացին տեսնելով, որ իւր բերքերը սպառողներ են գտնում, կաշխատէր վաճառելով օգուտ ստանալ, մի երեսյթ, որ պարզ նկատում է ժամանակակից գիւղերում, որտեղ ակնյայտնի կերպով հազուագէպ են նախկին լիութիւնն ու առատաձեռնութիւնը։ Ահա թէ ինչպէս է նկարագրում վիպասանը գիւղացու առատաձեռնութիւնը։

Ենաքանի եադն էլ նրանց գոնովը անց կենար, իրանը թեկիցը կրաշէին, տուն կկանչէին, որ նրանց սուփրի համն առնի ու էնպէս ճանփայ ընկնի, նատ անգամ եկեղեցումը որ մէկ զարիբ օքմին կտեսնէին, «Սուրբ սուրբնասածին պէս շատը կերթար եկեղեցու գուռը կկաղնէր, որ սփմա ինքը նրան իւր տունը տանի, ու շատ անգամ, երբ ուղողը շատ կըլէր, խօսքը մին կանէին, որ մէկ երկու շաբաթ նրան իրանց միջումը պահեն, նրան քէֆ շանց տան ու բոլորն

բում ցոյց էր տալիս ոչ թէ այն, որ արտադրական ոյժերը զարգացել են, այլ այն, որ հանոյք սահնակ միջոցները հաւաքուել են այնպիսի առատութեամբ, որ առանձին անհատը հնարաւորութիւն չուներ ինքը սպառելու, եւ նրան ոչինչ չէր մնում անելու, բայց երէ բաժանել նրանց ուրիշների հետ։ Հռովմեական կայսեների ժամանակ առատաձեռնութիւնը ամենաերեւելի առաքինութիւններից մէկն էր նամարւում։» Карлъ Каутскій, «Античный миръ, іюдейство и христианство», пер. Н. Рязанова, СПБ, 1909. стр. 510.

ի միասին՝ մէկ օր սրա տանը, մէկ օր նրա՝ ուշ
բախութիւն անեն, դարիքի սիրտն առնեն . . .
Էնպէս մարդ կար, որ տարէնը էրկու հարիր,
իրեք հարիր լիտր տանձ, խնձոր, ծիրան ծա-
խում էր ու մէկ էնքան էլ աղքատի ու ճամ-
փորդի ուտացնում, եա դեղապէտի համար պա-
հում, որ սարի աղքատ խալիսը—թուրք, հայ,
չունքի բաղ չունին, մէկ հիւանդ պատահելիս
գան տանին ու իրանց թամարդու նաչազի աջըք
դուանը չմնայ... Ամեն մարդ իւր բաժակի գինին
ալհագդա ունէր պահած, որ համ իր եկեղե-
ցուն էր տալիս, համ էն գեղըցոնց բաժանում,
ուր տեղ բաղ չկար, որ նրա ննջեցելոց հոգին
յիշեն. Ամեն նաւակատեաց՝ ոչխար առես, կով
ասես, մորթում, մատաղ անում, ժամ, պա-
տարագ. անել տալիս, ժամօց բաժանում՝ ու
տանով տեղով դնում իրանց սիրեւեաց գերեզ-
մաններն օրհնել էին տալիս ու աղքատներին
կշտացնում»*)

Գիւղի ազգաբնակութեան նկարագիրը բա-
ւական համարելով հարց տանը, թէ՝ արդեօք այս
երեք գասարկարդերից որը կարող էր գրաւել
գրչի մարդկանց ուշադրութիւնը: Թէև, ի հար-
կէ, կգտնուէին մարդիկ, որոնք կշարունակէին
իրենց հին երգը երգել ու հայոց զրականու-
թիւնը «հարստացնելը կեղծ-կլասիկ երկերով,
որոնց նպատակը էին հայ կեանքի—աղնուա-

*) «Աէքք Հայաստանի» Եր. 55



կանութեան ու հոգեոր գասի տիրապետութեան շրջանի պատկերացումը և ջատագովումն էր, — այնուամենայնիւ հոգեորականութեան անկեալ դրութիւնը կ'առիպէր գրողների մի մասին ուշ դարձնել միւս երկու գասակարգերի վերայի Բայց որովհետեւ վաճառականութեան անզարգացած դրութիւնը չէր կարող դեռ ևս երեան հանել այդ տիպի տնտեսութեան ու մարդկանց դրական կողմերը, այլ, ընդհակառակը, առեւտրական ներկայացուցիչների բացառական կողմերով վանիչ ազգեցութիւն պիտի գործէր, — ուրեմն քնականարար ուշադրութեան գլխաւոր առարկան պիտի լինէր գիւղացիութիւնը:

Եւ իրօք, շուտով գիւղացիութիւնը ներս խուժեց գրականութեան մէջ։

V.

Գիւղացիութեանը գրականութեան մէջ տեղ տուող հեղինակների կարապետն էր Խաչատուր Աբովեանը։

Առաջին անգամն էր, որ բանաստեղծական գրուածքի հերոսը գիւղացին էր գառնում, և հեղինակը, ինչպէս մի պանորամայի մէջ, ցոյց էր տալիս գիւղական կեանքը իւր տարբեր ներկայացուցիչներով ու տեսարաններով։

Ահա գիւղական եկեղեցին առաւօտեան ժամերգութեան ժամանակ, ժամաւորներով, ժամհարով, տէրտէրով, մղդոփ երէցփոխանով ու չարութիւն անող երեխաներով։

Ահա գիւղացի կինը կերակուր պատրաստեալիս Աթարի ու թանձր ծուխը գուռն ու երթիկը կալել, տունը միսի ծով է շինել, էնպէս որ մարդի աչքը առաջը չի կարում ջոկիս էրեխէքանց սուզ ու շիւանը գլուխ է տանում, քեալա ծակում, Խեզճ տանտիկինը էնքան ծուխ է կուլ տուել, բռնոթի քաշել, փոշտացել, հաղացել, որ սիրտն եկել է բողազին դէմ առել, էնքան աչքերը տրորել է ու աղի արտասունք թափել, որ աչքի լիսը թռել է, էնքան կուզէկուզ հաւակրի պէս ման է եկել, պուճախէ պուճախ ընկել, որ էլ մէջքը չեր կարում քաշել, թունդիրն էլ քանի գնում, թէժանում է, Պղնձները ղըլթղթալով եփ են գալիս . . .

Տեսարանը փոխուեց, — «Բեղխուզէքը գալիս են տօ, տեղ արէք, զրադ կացէք, ճամփայ բաց արէք» — ձէն է տալիս մէկ աչքը քոռ, գունչը ծուռը գզիր կոստանը, Մարդի քէֆը գալիս է տեսնելով, թէ ինչպէս տանուտէրն և քէդխուդէքանց շատը գդակները կոտրել, աջուականջի վրայ թեքել, իրանց հինգ ոչխարանի քուրքը քէֆով մէկ էս ուսին են քաշում մէկ էն ու բազի անգամ գլխներն էլ հետը տրըմբացնում են, որ գդակները գժութիւն շանեն, իրանց չափը ճանաչեն ու գուզ կանգնին, Սրանք բոլորը ժամից գուրս գալով գնում են տանուտէր Օհանէսի օդէն բարիկենդանի քէֆը անելու Ճանապարհին իրար բռնոթի թաւազա անելով, կամ մէկը ձեռը միւսի գօտիկը կամ ճտովը

քցած՝ իրանց էրէխութիւնը միտներն են բերել
ու շախա անում, բոթքոթում, շուացնում,
զոթկացնում, փոթկացնում, ճռթկացնում,
մոթկացնում ու բազի վոխտ էլ հրհռում,
քրքռում, բըրբռում, գրդռում։ Շատի հօ ծի-
ծաղու մէջքի իլիկը կոտրուել է։ Թագաւորն էլ
էնպէս ուռած ուռած իր քոշք ու սարէն չի
մտնիլ, ինչպէս մեր գեղի իշխանքը՝ իրանց տան
գոմը . . .

Ահա տանուտէրի օդէն, Քէֆըները շաղա-
ցել է, դամազները տաքացել, շունը տիրոջը
կորցրել։ Կըչոնց Վիրապն էլ հօ էստեղ է, էլ ի՞նչն
է պակաս, սազը կողքին հաղիր ունի. ականջ
պտի, որ նրա ձէնին հայիլ մայիլ մնայ, ին-
պէս զոռքա ձէն ունի Վիրապը, որ հինգ սհաթ-
ուայ ճամփից լսուում է։ «Փիր օլոան, փիր,
ջանըմ սան, ջանըմ, ի՞նչ կըլէր, որ քո մէրն
քեզ նման մէկ հինգն էլ էր բերել ու աշխարհքի
միջումը մի հատ չըլէիր։ Ասա, բերանիդ զուր-
բան, ասա, բերանդ ապրի, ըմբռով կշտանաս»,
— հազար տեղից ձէն են տալիս մեր պարսն
քէդխուդէքը գլխները տրմբացնելով, անօշ անօշ
զկուտալով։ Տես, քէֆը քոք ժամանակին տէր-
տէրն էլ իր ձէնի հունարն է ուղում նշանց տայ,
ու կամ Վիրապի հետ բաս մտնում, գոռում։
կամ թէ չէ «Երկեցաւ խնկաբերիցն» ասում,
խալիսի թասըները վէր դնել տալիս կամ ձեռը-
ներին բանդ անում, ամա էնպէս մէկ մխոտ,
ճոխուած, ճղլանի, քացախած ձէնով, որ մարդի

գլուխը տեղից պոկ է դալիս։ Քեզիսուգէքը հօմաջալ չեն տալիս. ինչ բերանները դալիս է, հենց էն են քեօնդալանա ասում, էնպէս որ խեղճ սազանդարի առածը բերնումը հարամ է ըլում։ Ամենը հօմենը, իլլահիմ՝ մեր մեղրաբերան տառուտէրը. անատամ ռեխը որ բաց չի անում, պատերը գողում են, կատուըները մլաւում, հաւերը բակումը իրանց տիրոջ ձէնը լսելով շարքով կանգնում, կրկուում, եա կչկչում. ֆորթ, եղը, ձի, տաւար ուզում են, որ ուրախութիւնից կապըները կտրեն։ Խուլասա, ինչ գլուխդցաւացնեմ, էսպէս մուզիկի ու նաղրախանի ձէն շահի գուանն էլ չի լսուած...»

Մի ուրիշ տեսարան։ «Էէս օր է. Արեգակն եկել, երկնքի մէջ տեղը բռնել է, օրուան փուշը մի քիչ կոտրուել, տաքացել է։ Սար ու ձոր էր ծաթի պէս փլփլում պլպլում են։ Զէնց իմանասթէ երկնքիցը մէկ աւետեաց ձէն է եկել, աշխարհս արքայութիւն է դառել և Քանաքուու խարաբէքն էլ են ծափ տալիս, էնքան տղամարդ, ջահէլ տղէրք, էրէխէք են տներիցը դուրս եկել, քուչէքումն ու կտրներին քէփ անում։ Ոհաթ խալխը, որը ձեռնաբռնուել է արել, պար դալիս, որը բոլորել, շուրջ նստել, քէփ անում, որը խաղ է ասում, որը դամ քաշում։ Էստեղ զուռնէն է փշում, էնտեղ ճղալախտի են խաղում, միւս տեղը փահլւաններն են կոխ պրծնում, եա զարաչիքը ֆալ բաց անում։ մանր տղերն էլ եա ձնաթօփի խաղում, եա աչքակապուկ, եա

սալդաթի պէս կռւում, Դափի, զուռնի ձէնն
ու հարայ հրոցը աշխարհք են վերկալել։

Իսկ էս ով է, որ քեահլան ձին հեծած,
իւր գաստէն եղեին քցած, մէկ տառը ձիաւու-
րով անց է կենում գեղի միջով։ Հէնց իմանաս,
մէկ թագաւորի օրդի է գալիս Եարաղ ասպարը
կապած, թուանքն ուսին, թուրը կողքիցը կախ,
ջուխտ փշտովն ու դամէն գոտիումը, կանաչ մով
շալուարը, զառկապէն հագին, գիւրանդի աղ-
լուխը ճտին, նուղայի թուխ գդակը գլխին կո-
տրել, աջու ականջի վրայ է քցել, ոսկեթել
թուխ թուխ մազերը ձախու կողմիցը քամու հետ
խաղում, եա երեսին գիպչում, եա բկի տակովն
ընկնում։ Բեղերն ապրշումի պէս ոլորել, էնպէս
է թշի վրովը դում տարել, որ ամեն մէկի մէկ
ձէրը ականջներին են գիպչում։ Մտիկ անողի
խելքը գնում է։ Գեղըցիք հէնց նրան տեսան
թէ չէ, ծափ տուին, պար էկան, ձէն ձէնի տուին
ու սկսեցին նրա խաղն ասել, նրա գովքն ածել
ու նրա թասը խմել։ Երիտասարդն էլ գդակով
է անում, քաղցը երեսօվ գլուխ տալիս ու անց
կենում։

— Տանուտէր Օհանէսի մեծ տղան է, Աղա-
սին է, ջիւան Աղասին, որ իր քէֆն արել, պրծել։
գնում է կալերի գգումը, ջաղացների մօտին իր
հունարը նշանց տայ, ջիրիդ խաղոյ։

Հեռըւանց երեսում է, թէ ինչ զիամաթ է
անում իգիթը։ Զիու ականջը մտած՝ էնպէս է
քշում, կրակին տալիս, որ հէնց իմանաս թետ-

ւոր դուշ ըլիս նատ անգամ՝ ջիրիդը հեռու տես զից շպրտում։ Ճին չափ է քցում՝ ու գետնիցը ծուլ ըլելիս ճիռւ վրիցը բռնում է, էլ եդ քցում։ Նատ անգամ հէնց էնպէս գուղ շպրտում է, որ կրակի պէս եդեկիցը հասնում, կալնում, էլ եդ ծուլ անում, Գետնին վէր ընկած տեղիցն էլ էնպէս է թամբի միջոցը կատացնում, բարձրացնում, որ ջիրիդն առաջին գոզում է. ընկերուանց վրայ էլ, որ վախտ վախտ ջիրիդ չի քցում, էնպէս է նշանում, որ գդակների ծէրին է դիպչում, կամ գդակը հետը տանում, որ իմանան, թէ նա նրանց զմիչ չի անում։ Նատ անգամ՝ թամբի միջին ջուխտ ստի վրայ կանդնած՝ էնպէս է ճին չափ քցում։ «Զանըմ» սահ, չանըմ, Աղասի, մէրդ մէկ հատ ա քեզանից բերել. հագար տարի անց կենայ, քեզ նման մէկն էլա բհամ չի գար, — ասում են թամաշուորքն ու խնդում, ուրախանում, ծափ տալիս,

Բայց էն ինչ կոկծակի ձէն է, որ յանկարձ էս քէֆի միջումը լսուում է. — «Տարան, տարան, աստուածասէքը, մօտ եկէք, քոմակ արէք, գլուխս լացէք, տունս կոխեցին, օջազս քանդեցին, աշշ քիս լիսը հանճւմ են, սիրտս գուս են ճոթուում, տօ մէկ հասէք, ինչ կըլիս . . .

Իսկ մի ուրիշը թուրքերէն ասում, հարբա է տալիս, որ ձէնը կարի. — «Զէնդ կարի, զանչըզ, զարաչի . . . հէնց էս սհաթիս փորդ վէր կածեմ. շինդեանութիւն ինչ պէտք ա, Սարգարի հրամանն ա, պէտք է ձեր աղջիկը քաշենք, տա-

նենք, ինչ խօսք ունիք, ինչ կարողութիւն, Սարդարի հրամանին սարը չի գիտանալ, դուք ինչ կարաք անելը,

Հենց բռնես մէկ ամպ տաքեց, երկիրը շարժեց, եա թոփի թոփիսանի ձէն էկաւ, եա երկինքը փուլ էկաւ, Խալիսի գլխին ջուր մտղուեցաւ, Ամենքն էլ իմացան, թէ Սարդարի ֆառաշներն էկել են, որ Աթոյենց աղջկան քաշեն, ով հադդ ունէր, որ ծպտայ: Տղամարդկերանց որը վախուկ էր գլուխն առաւ, կորաւ, իսկ որոնք որ մի քիչ պինդ սիրտ ունեն, զարգանդելով, գողգողալով մօտ են եկել, թէ ինչպէս են տանում խեղճ ջրատար աղջկանը: Ուանդ մռանգները թռած, սպրթնած՝ եկել, մեռելի պէս շարուել են տան բաշին: Շատի լեզուն բերնումը շաղուել, փէտացել է: Շատի լերդն ու թռքը ջուր է կտրուել, շատի պոօշները ահու ճաքել, արիւնը շռուալով գնում է:

Ի՞նչ խեղճ, ողորմելի մէրն է անում, Աստուած հեռու տանիւ Քար չի մնացել, որ գլխին չխփի, հող չի մնացել, որ վրէն չածի: Չազը կորած հաւի պէս մէկ դէս է վաղում, մէկ դէն, մէկ գլխին տալիս, մէկ ոտին: Էնքան է ծընկներին, գլխին խփել, հարայ տուել, լաց էլել, մազերը պռճոկել, երեսը չանդռել, կտրատել, որ էլ ոչ աշքումն է լիս մնացել, ոչ ջանումը՝ թաղաթ, ոչ բերնումը՝ լեզու: Էսպէս հէնց ձէնը փորն ընկած, շունչը կտրուած՝ ոտին գլխին էր անում, ինքն իրան ջարդում, զլուխը քարէ

քար տալիս, եա սուրութմիշ ըլելով, գետինը լիզելով, ֆառաշների ոտներն ընկնում, եա ձեռուները բռնում, որ թուրը խլի, իր սիրտը խրի...

Իսկ նրա դուստրը, Թագուհին, Թագուհին, աշխարհի աչք Թագուհին, երկնքի տակին, գետնի երեսին անժառակամ ծաղիկ Թագուհին, դրախտ, մանիշակ, անգին, անհատ, աննման Թագուհին սառել, փէտացել, անշունչ, անլեզու մնացել է գետնի վրայ ընկած, երեսը երկինքը քցած, Շլինքը ծռուել, թուլացել, գլուխը շեմի էս կողմն է մնացել կախ էլած, մարմինը էն կողմն ընկած։ Ոսկեթել մազերի կէսը մնացել է բարձր, որ նրա անմեղ երեսն ու գօշը ծածկի, կէսը էնապէս խճճուած, գետնի վրայ փռուել, քաշ է ընկել։ Նազուկ ձեռների մէկը սրտի վրայ է թուլացած ընկած, միւսը հողի վրայ չորացած, տարածուած։ Դամարը ցամաքել, շունչը կտրուել, հոգին երկինքն է վերացել։

Ահա ֆառաշները հրամայում են նոքարներին, որ ձիաները թամքեն, եարազ ասպազ քցում են, թուրըները կապում ու կամաց կամաց մօտ գալիս, որ մօրն էլ, աղջկանն էլ վերցնեն, տանեն...

— Հէյ, ուր ես, իգիթ, ուր ես, Աղասի։

Յանկարծ՝ ու ու ամուսնու ամպերի միջից փայլող ու արար-աշխարհ լուսաւորող կայծակի պէս մէկ թուր պըսպղաց, ֆառաշների մէկի գլուխը գետնի վրայ ընկաւ ու սկսեց զլուրլացնել, բլբլացնել ու պար գալ. գեռ սա ձէնը չէր

կտրել, որ միւս ընկերինն իւ որա հացը կերաւ,
որա մօտ գնաց՝ Եւ ինչպէս երկինք—գետինք
գդրդացնող—սաստնեցնող ամպի գռռոց լսուեց
Ազասու ձոյնը:

— «Դժոխվի որդիք, ձեզ ով ա զրկել էս
տեղ, ում վրայ էք էդպէս կատաղել, ասենք,
թէ հայը ձէն չի հանում, պէտք է նրան սազ-
սազ ուտէք, աչքըներիդ լիսը կը թռցնեմ էս
սհաթը, կորէք, թէ չէ ամեն մէկդ ճուտի պէս
առաջիս կթպուտայ, Քանի էս կուռս վրէս ա,
դուք էստեղանց թել չէք կարող տանել»:

Ահա Ազասին ձեռները խաչել, փէտացել,
մնացել է կանգնած, ինքը արնի միջին ծլծլում
է, իսկ արտասունքը աչքերիցը գլուխով վեր է
թափուռում:

— Ես երկրումը քո արել մէք մտաւ, Ազա-
սի, քո օրը խաւարեցաւ, քո ճրագը հանգաւ,
թոփի բերանն է, քո ջանը, Քանի ստքը խաղազ
է, քանի ջելաւը՝ ձեռիդ, քեահլան ձին՝ տակիդ,
եարազ ասպարը՝ վրէդ, քանի բերնումդ շունչ
կայ, սառումդ՝ թազակդ, փախիր, գլխիդ ճարը
տես: Սարդարի ֆառաշներին ես սպանել: Դրանց
արիւնը քեզանից կուղեն, դրանց տէրերը հիմիկ
կատաղել, իրանց միմն ուտում կըլին. ինչ ես
փէտացել կանգնել, էլ ո՞ր օրին ես մտիկ տալիս...

Դառած *) արջը փնչացնելով դուրս պրծաւ,
Սարեր, ձորեր սասանում են ձէնիցը,

*) Կատաղած:

Անմեղ գառը, ուր ես կանգնել դու անցաւ,
Քեզ կքրբրի, փախիր նրա ձեռիցը . . .*)

VI

Աբովեանի վեպի առաջին գլխի բովանդակութիւնը պատմելուց յետոյ այժմ անցնենք երկրուրդ գլխին։ Սա սկսում է Երևանի բերդի կղասիկ նկարագրութիւնով, որին հետեւմ է Արտրատեան գաշտի ամառուայ իրիկնագէմի նկարագիրը. վերջինս Աբովեանի գրչի տակից ելած հատուածներից ամենաընալինն է։ Ապա հեղինակը ընթերցողին հանդիսատես է դարձնում Երևանի թուրքերի մահառամի սուզին, որի առաթիւ էջմիածնի պատուիրակները նուէրներ են բերում։ Սարդարին։ Այդ օրը Երեկոյեան ժամերագոթեան ժամանակ, երբ Եկեղեցիները լցուած են լինում մեծ բազմութիւնով, պարսիկները սկսում են կոտորածը, որից յետոյ նրանք հայերին քոչել են տալիս գէպի կարս և գէպի Բայազէգ։ Յետոյ վիպասանը գործողութիւնը փոխադրում է Խղարաբղիսա, որտեղ ցոյց է տալիս ընթերցողին տեղացի հայերի ու պարսիկների կոտի տեսարանները, հայերի պարտութիւնը, բազմաթիւ պատանիների ու մանուկների գերութիւնը և նահատակութիւնը վագերասիրտ Հասան-խանի հրամանով։ Վէպի այս

*) Վերը Հայաստանին. եր. 82:

գլուխը բոլորովին միջանկեալ է և շատ չնշին կապերով է միացած ամբողջի հետ։ Գլխի վերջին մասերում մի վայրկեան միայն երեսում է Աղասին և իոկոյն էլ չքանում։

Երրորդ և վերջին գլուխն է իսկապէս առաջնի շարունակութիւնը։ Հեղինակը պատմում է, թէ ինչպէս Աղասու վարմունքի պատճառով Քանաքեռի գիւղացիներին տարան, լցրին երևանի քերդը, Այնուհետեւ միմեանց ետեից նկարագրում է Աղասու և իւր խմբի ընդհարումը պարսիկների հետ Աբարանում, նրանց վարած կեանքը Փամբակի հայերի մէջ, բաղմաթիւ կուիները Անիի աւերակներում, Աղասու ցանկութիւնը Անին շէնացնելու, նրա՝ ոռւսաց բանակ դնալը, երևանի քերդի առումը, Աղասու մահն ու թաղումը։

Աբովեանը իւր վէպը անօւաննել է պատմական։ Ակըզբում իսկապէս որ այդ երկը վէպ է, բայց քանի գնումէ, այնքան աւելի նմանում է վիպանման պատմութեան։ «Վէրք Հայաստանիի» երկրորդ և երրորդ գլուխները նկարագրական այնպիսի հատուածներ ունեն, որոնց բելինքութեանը ոչ մի հայ հեղինակի նկարագրութիւն չէ հասել. այդ գլուխները արժէքաւոր են հայ ժողովրդի քաղաքական կացութիւնը ուսումնասիրելու համար։ Կենցազագրական տեսակէտից նրանք չեն կարող մրցել առաջին գլխի հետ, որը շատ մեծ նշանակութիւն ունի, որոհետեւ այս գլխումն է տալիս Աբովեանը Ժամանակակից գիւ-

դացու տնտեսական դրութեան և նիստ ու կացի պատկերը, Այդ է պատճառը, որ մենք ընդառակալ պատմեցինք այդ գլխի բովանդակութիւնը մեծ մասամբ հիւսելով վէպից քաղած հատուածները:

Բայց վէպի առաջին գլուխը յատկապէս մեծ արժէք ունի նրանով, որ այդտեղ մենք տեսնում ենք, թէ ինչպէս է վերաբերում փակ տնտեսութեան շրջանի հայ գիւղացին իւր տնտեսութեանը, հոգեոր դասին և վաճառականութեանն ու փողային տնտեսութեանը. ուրիշ խօսքով այդ գլխում գտնում ենք շատ որոշ կերպով արտայայտուած գիւղացիական իդէոլոգիա, որի քննութեանը և անցնում ենք այժմ։

VII

Գիւղացիական աշխարհահայեացքի հիմքը կազմում է կարծիքը գիւղիքական աշխատանքի մասին։

«Նահախ տեղը՝ դատած (ուրիշի-թ. Ա.) մալը ուտիլը ու դատարկ քնիլը հարսմ ա,—տառում է վէպի հերոսը, Աղասին. — մարդ պէտք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլի»^{*)}):

«Ով թամբալ ա, թող նա դարդ անի»^{**)}) — նկատում է քէթխուդաներից մէկը երիան

^{*)} «Վերը Հայաստանի», եր. 26,

^{**)} Կոյնը, եր. 57.

հանելով գիւղացու ըմբռնումը ֆիզիքական աշխատանքի կարևորութեան մասին։

Ընթերցողներից շատերը կժպտան կարծելով, որ արդէն չափազանցութեան ենք հասցնում ամեն բան կապելով օրոշ գառակարգերի հետ։ Միթէ կարող է լինել, — կասեն, — որևէ է դասակարգ, որ ֆիզիքական աշխատանքի վերայ արհամարհանքով նայէ. միթէ ամենուրեք չենք լսում աշխատանքի փառաբանութիւն։ Ով ուզում է, ժպտայ, իսկ մենք լսենք ականաւոր հեղինակներին ու սոցիոլոգներին։

«Յոյն և հռովմայեցի հասարակութիւնները, — ասում է անուանի Բելտովը, — ինչպէս յայտնի է, սորկատէր հասարակութիւններ էին։ Այսպիսի հասարակութիւնների մէջ ամբողջ ֆիզիքական աշխատանքը, արտադրութեան ամբողջ գործը ընկնում է սորուկների վզին։ Ազատ մարդը ամաչում է այդպիսի աշխատանքից» *):

«Հերոսական շրջանից յետոյ, — գրում է հոչակաւոր սոցիոլոգ Իւլիյ Լիպպերտը, — պետութիւնների մէջ ֆիզիքական աշխատանքի ճակատին գրոշմուած էր ամօթանքի կնիքը։ Իսկ ամօթալի էր համարուում ֆիզիքական աշխատանքը այն պատճառով, որ աշխատանքի բաժանման ժամանակ՝ այն (ֆիզիքական աշխատանքը. Թ. Ա.) վիճակուեց մարդկութեան կախում ունեցող մա-

*) Н. Бельтовъ, «Къ вопросу о развитіи мон-
взглядъ на исторію, СПБ, 1906, бр. 446.

սին — ստրուկներին։ Այնպիսի մարդիկ, ինչպիսին են Պլատոնը և Արիստոտելը, լիովին համաձայն են, որ ֆիզիքական աշխատանքը ամօթալի բնաւորութիւն ունի. այդ աշխատանքը ստրկութեան նշան է»^{*)}։

«Աղնուականները, — նկատում՝ է գրանսիական յեղափոխութեան պատմագիր Վիլհելմ Բլուսը, — վիրաւորական արհամարհանքով էին նայում քաղաքացու վերայ, որ իւր սեփական աշխատանքով էր ձեռք բերում ապրուստի միջոցները։ Գիւղացիների ու ճորտերի վերայ նայում էին աւելի իրու աշխատաղ անասունի, քան մարդկանց վերայ»^{**})։

«Երկար եղունգները, — գրում՝ է սոցիոլոգիայի մեծ վաստակաւորը, Էգուարդ Տայլորը, — նոյն իսկ մեղանում նշան են այն բանի, որ նրանց տէրը ձեռքի ոչ մի աշխատանքով չի պարտպում։ Զինաստանում ու սրան մերձակայ երկիրներում թոյլ են տալիս, որ եղունգները աճեն ու հասնեն հրէշաւոր մեծութեան։ Եղունգների երկարութիւնը ազնուական ծագման նշան է. և տիկինները յատուկ արծաթեայ պատեաններ են կրում մատների ծայրին իրենց եղունգները պաշտպանելու կամ գոնէ ուրիշներին հաւատացնելու, որ իրենք

*) Ю. Липпертъ, «Исторія культуры», пер. Острогорского П. Струве. СПБ 1907, бр. 209.

**) В. Блоесъ. «Французская революция» пер. Львовича, СПБ, 1906, бр. 6.

երկար եղունգներ ունենա Ուրիշ դէպքերում
թոյլ են տալիս եղունգներին աճել իբրև նշան
այն բանի, որ նրանց կրողը կրօնական կեանք է
վարում և չի զբաղւում ոչ մի աշխարհային
աշխատանքով^{*)}։

Կարծում ենք, որ այս բոլորը հաստատում
են այն, որ ամեն դասակարգ ֆիզիքական աշ-
խատանքը ջատագովող չէ։ Այն դասակարգերը,
որոնք ապրում են առանց ֆիզիքական աշխա-
տանքը անձամբ կատարելու, իրենց աշխարհա-
հայեացքի մէջ այդ աշխատանքի գովարանու-
թեանը տեղ չեն տալիս իսկ ընդհակառակը,
այն հասարակական խմբերը, որոնք ապրում
են ֆիզիքական աշխատանքով, վերջինին մեծ
տեղ են տալիս իրենց աշխարհահայեացքի մէջ։

Իսկ ինչպէս է նայում գիւղացին երկրա-
գործական աշխատանքին։ Մենք բոլորով, որ
երկրագործ ժողովրդի զաւակներ ենք, որ փոք-
րուց անդադար գրականութեան մէջ կարգացել
ենք երկրագործ ժողովրդի կեանքի, գութանի
ու արօրի փառաբանութիւն, չենք էլ ենթադ-
րում, որ կարող է ուրիշ տեսակ վերաբերմունք
լինել դէպի աշխատանքի այդ տեսակը։ Սակայն
սոցիոլոգիան ապացուցանում է, որ հաշտ վե-
րաբերմունքը դէպի երկրագործութիւնը մշտա-
կան երկոյթ չէ։

^{*)} Թ. Տայլօրъ. «Антропология» пер. Ивина,
СБЛ. 1908, бр. 258.

Այս անգամ խօսողը «Սինտետիկ փիլիսոփայութեան սիստեմի» հեղինակն է, Հերբերտ Սպենսերը:

«Բեխաբիտների կրօնական պատուիրաններից մէկը հետեւալն է ասում. Դուք պէտք է ոչ տներ շինէք, ոչ հացահատիկ ցանէք, ոչ խաղոզի որթ տնկէք և ոչ էլ ունենաք. այլ պարտական էք ձեր կեանքի բոլոր օրերն անցկացնելու վրանների մէջ։ Նոյն ձևով և է. Վ. Բոբերտսոնը վկայում է, թէ հին նարատէեան համայնքների միութեան օրէնքներից մէկը յայտարարում էր. որ քրէական յանցանք է հացահատիկ ցանելը, տուն շինելը կամ՝ ծառ տնկելը . . . Այդ թափառականները ամուր և անշեղ հետեւում էին մի սկզբունքի—իւրաքանչիւր գրաւած երկիր գարձնել ամայի ու ընդարձակ արօտատեղի։ Գործողութիւնների այսպիսի եղանակի վերայ նրանք նայում էին, որպէս կրօնական պարտքի վերայ»*):

Նոյնը նկատում ենք նաև հրէայ ժողովուրդի այն զրոյցների մէջ, որոնք առաջացել են նրա թափառական կեանք վարելու շրջանում **):

*) Г. Спенсеръ, «Основанія соціології» СПБ. 1876, եր. 654.

**) «Եւ եղեւ Հարէլ հովիւ խաշանց եւ Կայէն գործէր զերկիր. Եւ եղեւ յետ աւուրց երեր Կայէն ի պաղոյ երկիրի պատարագ Աստուծոյ. Ո.ծ Եւ Հարէլ յանդրանկաց խաշանց իւրոց եւ ի պարարտաց նոցա. Եւ հայցաւ Աստուծ յԱրէլ եւ ի պատարակնորաւ եւ ի Կայէն եւ ի գոհս նորա ոչ նայեցաւ» Ծննդոյ. Պ. 2—5.

Բայց եղբ ժողովուրդը որսորդական ու անտառնապահ վիճակից անցնում է երկրագործական կեանքին, փոխում է ամբողջ աշխարհահայեացքը, սկսում է իդէալականացնել ապրուստ ձեռք բերելու այս եղանակը և նոյն իսկ կրօնն էլ սրբագործում է նրա այս համոզումը։ Այսպէս օրինակ, երբ հին պարսիկները թափառական կեանքը թողին և գարձան նստակեաց ու երկրագործ ժողովուրդ, այն ժամանակ նրանց կրօնն էլ նուիրագործեց երկրագործական աշխատանքը։ Այս հաստատում են Զենդ—Աւեստայից քաղած հատուածները։

«Այն հարցին, թէ որտեղ է երկիրը իրեն ամենից աւելի երջանիկ զգում, Ահուրա-Մազդան պատասխանում է. — Այնտեղ, որտեղ հաւատացեալը ամենից աւելի է հացահատիկներ, խոտ և պտուղներ մշակում, որտեղ նա ոռոգում է անջրդի հողը և խօնաւ գետնից ջուրը հանում ու ցամաքեցնում է, որովհետև դժբախտ է այն հողը, որ երկար ժամանակ անմշակ է մնում» *):

Հին պարսկի հայեացքով երկրագործական աշխատանքը կրօնական պարտականութիւն է, որը կատարել—նշանակում է ծառայել Աստծուն և կոռւել չարի դէմ։

«Ով հացահատիկ է ցանում, նա ցանում է սրբութիւն» **):

*) Դ. П. Шантепи де ля Соссей. “Иллюстрированная история религий”, пер. подъ-ред. В. Линдъ, Москва, 1899, հատ. II, եր. 205:

**) Նոյնը, եր. 205.

«Երբ ծլումէ հատիկը, այն ժամանակ դեերը
վշշում են,

Երբ ընձիւղներ է արձակում, այն ժամա-
նակ դեերը հազում են,

Երբ բարձրանում են ցօղունները, այն ժա-
մանակ դեերը լաց են լինում,

Երբ ատօք հասկեր են դուրս գալիս, այն
ժամանակ դեերը փախչում են» *).

Երկրագործական աշխատանքի ջատագովու-
թեան առատ նմուշներ կան նաև հայ գիւղացու-
երգերի մէջ.

Եռղքն ընկաւ ծմակին,

Աստուած կտայ մշակին.

Սուր գութանը ծիր գնաց՝

Տէր մշակը քամակին.

Սեր մէ, սեր մէ, այ մշակ,

Սուրբ ա, սուրբ ա քո փեշակ,

Մինին հազար տուր, Աստուած,

Քեզ ձէն կտան, տէր-մշակ **),

Օրհնեալ է Աստուած,

Յիշեալ է Աստուած.

Ա՛յ պապիս գութան,

Աստծու բան,

Ակօսիդ զուրբան ***).

*) Э. Тайлоръ. «Антропология», бр. 579 + 633 с.
для Соссей бр. 205.

**) Կոմիտաս վրդ. եւ Մ. Արեղեան. «Հազար ու մի
խաղ» Ա. յիսնեակ, եր. 9—10.

***) Նոյնը. Բ. յիսնեակ, երս. 45.

Օրհնեալ ես, Աստուած,

Յիշեալ ես, Աստուած.

Օր հնի մեր գութան—

Աստծու բան,

Օր հնեալ է մեր բան։*)

Գութան, գութան, հա գութան,

Աստծու իրան փայ, գութան,

Սաղ աշխարքիս փեշակնում

Դու քեզ չունես թայ, գութան**).

Բոլոր ասածները ապացուցանում են այն,

որ իւրաքանչիւր ժողովուրդ, կամ դասակարգ իդէալականացնում է այն զբաղմունքը, որով կարողանում է սեփական կարիքներին բաւարարութիւն տալ։ Սրանից արդէն կարելի է եզրակացնել, թէ ինչ վերաբերմունք պէտք է ունենան վէպի գիւղացիները գէպի երկրագործական աշխատանքը։

«Բախտ, բախտ էս ա, »***)—բացականչում է գիւղացիներից մէկը՝ հակադրելով գիւղական տնտեսութիւնն ու կեանքը մի այլ տնտեսութեան ու կեանքի։

«Իր տնի ած ծառի տակին քնելը, իր բհամ բերած պտուղն ուտիլը աշխարք աժի»,
—աւելացնում է նա****)։

*) «Հազար ու մի խաղ» Բ. յիսնեակ, եր. 48.

**) «Գեղարուեստ» խմբ. Գ. Եւոնեանի, № 2, եր. 26.

***) «Վ.Էրը Հայաստանի», եր. 56.

****) «Կոյնը, եր. 57.»

Գիւղական տնտեսութեան յաջողութիւնը
թոյլ է տալիս գիւղացուն առատաձեռն լինել,
և նա պարծենում է իւր այդ յատկութիւնով։
Քաղաքային կեանքի թոյլ զարգացումը գեռ ևս
չէ կարողացել խախտել այդ համոզումը։

«Տարէնը որ հազար շուն, գէլ, թուրք հայ,
աղքատ, զարիբ-զուրբաթ հացս չուտեն, տանս
չքնեն, գինիս չխմեն, իմ աչքը հէջ քուն կդայ։
Գեօսս էլ որ քանդեն, ձէն չեմ տուլ։ Իքուս
մասըլի (պտղի) տուտը թէհրան, Ատամբոլ ա
հասել, Ո՞ւմ հաղդն ա, որ մէկին չէ ասի, ինչ
ուտում են, չեն ուտում, էնպէս ասած ունիմ,
որ հաբգայ, խուրջին էլ լցնեն, որ տանեն իրանց
տունը. . . . Տաշտումը հաց ունենամ, կարառումը
գինի, ջուալումն ալիր, հէրն անիծած, որ չիփ-
չիփլախ էլ ըլիմ, դարդ անեմ։ Օջաղս լիքը ըլի,
տանս՝ բարաքեաթ, որդիքս՝ սաղ-սալամաթ, թող
օրը հազար մարդ մտնի, հազար մարդ դուս գայ,
ինչ եմ հոգում, հայն Աստծունն ա, ես էլ
հետը. ով հասնի, թող ուտի։ Տէրին փառք,
տեղը հլա շատ կայ, տղէքս սաղ ըլին, ջանս
ապրի. Աստուած իր ստեղծած բանդի ուղղը
ինչպէս կը կտրի։ Դգակս ծուռը կդնեմ, քէֆս
արամիշ կանեմ. ով թամբալ ա, թող նա դարդ
անի» *):

*) «Վերը Հայաստանի», եր. 57

VIII.

Այժմ անցնում ենք Արովեանի «Վէլք Հայաստանի»ի քննութեան ժամանակ ամենակարևոր մի կէտի լուսաբանութեանը—ինչ պատճառով և ինչպէս էր վերաբերւում՝ հայ գիւղացին փողային տնտեսութեանն ու վաճառականութեանը։

Խնդիրը ընդհանրացնենք ու հարց տանք. ինչից է կախուած դասակարգերի փոխադարձ վերաբերմունքը։

Ի՞նչն է պատճառը, որ պատմութեան մէջ հանդիպում ենք մի շրջանի, երբ ազնուական ու կալուածատէր դասակարգը պատկառանք է ազդում միւս դասակարգերի վերայ, և սակայն յանկարծ մի քանի ժամանակից յետոյ «ազնուական», «արիստոկրատ», «պամեշիկ» բառերը դառնում են նախատական մակդիրներ։

Ինչու հին հռովմայեցին անարգանքով է վերաբերւում mercator-ներին (վաճառական), ոռւս կալուածատէրը վիրաւորական է համարում կյուուց կոչումը ու բարձրից է նայում արտիննուկը՝ ին, բայց նրանց հոգեկից ու հարիւրաւոր տարիների ազնուական ծագումն ունեցող պրինցն ու կանցլերը ամօթ չեն համարում իրենց կողքին նստած տեսնել բոլոսայի ճարպոտ ու հաստափոր ներկայացուցչին։

Ի՞նչն է պատճառը, որ մի ժամանակ այն-

քան սոսոր արարած էր համարւում «վշտացեալ գեղջուկը», իսկ այժմ՝ գիւղացու փառաբանութեանն է նուիրում վիպասանը իւր դրիչը, բանաստեղծը՝ քնարը և հոետօրը՝ իւր լեզուն։

Ինչու էր երբեմն, երբ մարդիկ պարծանք էին համարւում «երրորդ գասակարդին» պատկանելը, իսկ ներկայումս «բուրժուա» կոչումը լսելիս ուռչում են միլիոնաւոր մարդկանց ճակատի երակները, պէծին են տալիս աչքերը, փրփրում արիւնը երակներում և սեղմուում բռունցքը զայրոյթից և ատելութիւնից։

Գտել է արդեօք ժամանակակից սօցիոլոցիան այս զարմանալի երևոյթների համար մի բացատրութիւն։

Այս, և ահա գրանց բանալին։ «Իւրաքանչիւր հասարակական դասակարգ նշանակութիւն է ձեռք բերում իւր ոյժի համեմատ»^{*)}։ «Իսկ ինչն է կազմում հասարակական տարրերի ոյժը Ոյժի միջոցները կարող են տարրեր լինել, նայած ժամանակին ու հանդաւանքներին. ոյժի էութիւնը միշտ միևնոյնն է։ Հասարակական տարրերի ոյժը գտնուում է մարդկային կարիքներին բաւարարութիւն տալու միջոցների ազատ տիրապետութեան մէջ։ Մարդկային կարիքներին բաւարարութիւն տալու միջոցների տիրապետութեան չափերից է կախուած ոյժի մեծութիւնը»^{**})։

*) Людвигъ Гумиловичъ. «Основы социологии» пер. подъ ред. В. Гессена, СПБ, 1899, бг. 236.

**) Նոյնը, եր. 204.

Որքան դասակարգը հզօր է տնտեսապէս (օր. կալուածառէրը, գիւղացին, վաճառականը) կամ տնտեսութեան մէջ կատարած գերով (օր. բանուորը), այնքան աւելի արհամարհաբար է նաև յում միւս դասակարգերի վերայ, և այնքան վծրաշինների ներկայացուցիչները ճգնում են մտնել այդ հզօր դասակարգի մէջ, իսկ երբ թուկանում է զօրեղ դասակարգը, նրա անդամները փոխում են իրենց վերաբերմունքը գէպի միւս դասակարգերը և իրենց հերթին աշխատում են դասալիք լինել սեփական դասակարգից։ Որևէ է դասակարգի հզօրութեան իւրաքանչիւր աստիճանին անհրաժեշտօրէն համապատասխանում է որոշ վերաբերմունք գէպի հասարակական տարրերը, այնպէս որ նրա ոյժի մեծութիւնից կարելի է եղանակացնել նրա վերաբերմունքը գէպի ինքը և միւս դասակարգերը, և ընդհակառակը, նրա վերաբերմունքից կարելի է հետեւցնել, թէ նա ինչ հզօրութեան տէր է։ Սոցիոլոգիական այս օրէնքի ճիշտ ըմբռնումը շատ բան հասկանալի է կացւցանում պատմութեան, ներքին քաղաքականութեան և գրականութեան մէջ։

Այժմ արդէն ժամանակ է հարցնելու, ինչպիսի վերաբերմունք կարող էր ցոյց տալ փողացին տնտեսութեանն ու վաճառականութեանը հայ գիւղացին այն ժամանակ, երբ այդ տնտեսութիւնը թոյլ էր զարգացած, իսկ առետրական դասակարգը գեռ շատ փոքր զօրութիւն ունէր. այն հայ գիւղացին, որի տնտեսութիւնը իրեն

լիովին բաւարարութիւն էր տալիս, այսինքն այնաքան տնտեսապէս անելանելի կացութեան մէջ չէր դրուած, որ այդ տնտեսութիւնից դուրս որմնումների ետևից ընկնէր։

Նատ հասկանալի է։ Փակ տնտեսութեան շրջանի հայ գիւղացին կարող էր միմիայն բացառաբար վերաբերուել փողային տնտեսութեանն ու վաճառական գասակարգին։

«Փողի բարաքեաթին էլ նալաթ, իրա կտրողին էլ, էսօր ջէրդ լցնես, էգուց պէտք է մատդլպստես։ Ոչ զիշերը քունդ ա տանում, ոչ ցերեկը զարարդ։ Փորացաւ ընկածի պէս մարդ չի իմանում, թէ թիքէն որ կողմովն ա գնում։ Փողը որ կայ, ձեռի կեխտ է էսօր կայ, էգուց Աստուծով միսիթարիս։ Մեռնիս, պէտք է շներոց, գէլերոց ըլի։ Թէկուզ փողի համն առած, թէկուզ իր միսը կերած, հէսաբը մէկ ա. . . Զէ, չէ, փողի սիքեն ճանաչողը ոչ հոգի ունի, ոչ հաւատ։ Փող — հող մին ա. Զարգար Պ. որ շատ փող ունի, հէնց էն ա, ինձանից մէկ թիզ բարյրացել ա ու լաւ ա ապրում։ Նրա քոռ աչքը գիտենայ։ Նատ ֆիքր անելուցը երեսի կաշին գնացել, չոփ ադառել, քամակն էկել, փորին դէմ առել, ատամները ցից-ցից մնոցել, աչքերը կուլ գնացել, մէկ որ փշես հազար տեղ գունդ ու կծիկ կըլի. մէկ որ քթին հուպ տաս, հոգին էն սհաթը կտայ.... Թուհ, մարդ իրան հոգին պէտք է ծախի, որ փողին թամահ անի⁹)։

⁹⁾ «Վերը Հայաստանի», եր. 56—58.

Թէ վաճառականութիւնը թոյլ է զարգացած և բնական տնտեսութիւնն էլ իւր բոլոր ոյժը դեռ պահպանում է, բայց արդէն զգացուում է առեւտրականի ու երկրագործի շահերի հակադրութիւնը,—առեւտրականը աշխատում է թանգ ծախել, իսկ գիւղացին՝ էժան գնել:

«Ճոթ առնելիս հօ շատն ուղում ա, մէկ երկու շահի փող ենք դատել, էն էլ նա խլի»*)։

Փողային տնտեսութիւնը ատելի է գիւղացու համար նաև նրանով, որ քաղաքում ստեղծւում է իրերի այնպիսի գրութիւն, երբ այլ եւս հնարաւոր չէ գիւղի լիութիւնն ու առատաձեռնութիւնը։

«Քաղաք որ մտնում եմ, հէնց իմանաս, թէ աշխարքը սով ա ընկել. էլ ոչ խէր կայ, ոչ բարաքեաթ։ Հացն ու ջուրն էլ, որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ում գուռը գնաս, ում ձեռդ դէմ անես։ Բաղի վախտ էլ տեսել եմ, որ դուքաններումը կիտուկ կիտուկ մանեթները, ոսկին ածած՝ ամեն փող համարելիս էնպէս զիտես, թէ փողատիրոնջ հոգին հետն ա դուս դալիս, էնպէս են որթսրթում իրանց խաղինի վերայ։ Հէնց իմանաս, թէ առաջներիցը թե կառնի, կթաշի։ Մէկ ձեռդ դէմ արա, շան որդի ըլիմ, ոչ մէկ բուռը հողի արժանանամ, թէ սուտ ըլիմ ասում, Աստուած, երկինք, գետինք, ծնվ, ցամաք,—մէկ ձեղ էլ չեն տալ, որ աչքդ կոխես։

*) Վ.Երբ Հայաստ. եր. 58.

Հազար տարի էլ, որ քո ազիզ սիրելու դռանն էլ շինքդ ծռես, կանգնիս, սովու մեռնիս, հաղար տարի անօթի փորով զկռտաս, մէկն էլ ա քեղ տուն չի կռնչիլ, մէկ սառը ջուր խմացնիլ *).

Չնայած երկրագործական կեանքի բոլոր ջատագովումներին, գիւղացին արդէն զգում է, որ իր կամքից անկախ մի վատ, չար բան է կատարում, որ երանելի հին ժամանակը անցել է. թուում է, թէ, որ նրա խօսքերի մէջ ապագայի վերաբերմամբ յունետեսութեան նշոյներ կան:

«Ե՞յ գիտի ժամանակ հա, ով էր տեսել կամ լսել աւալի սփթա էսպէս բաներ. գառն ու գէլն ի միասին արածում էին, հմիկ կովը վեր են քաշում, որ տեսնեն, թէ եարաբ փորթ կայ թէ չէ. Սատկած ձիու նալնի են ման գալիս. էլ ում ասես դարդգ։ Հերը որդին չի ճանաչում, որդին՝ հօրը, ախալէրն՝ ախալորը, լաւ ա, որ քարը քարի վրայ կանգնած մնում ա...» **)

Այդ նշան է, որ արդէն սկսում է իւր յաղթական ընթացքը առետրականը. Այդ «երբորդ դասակարգն» է, որ իւր ապրանքով ու փողով քայլայելով ու խօրտակելով հին նահապետական շէնքի հիմքերը՝ նոր կուլտուրայի սկիզբն է դնում:

IX.

Քիչ առաջ տեսանք, որ գիւղացիութիւնն ու հոգևորականութիւնը հանդէս էին գալիս, իբրև

*) «Աէրը Հայաստանի», եր. 57—58.

**) նոյնը, եր. 58.

վաճառող ու գնող, հակադիր շահերով:

Իսկ ի՞նչ տնտեսական յարաբերութիւն կարող է լինել գիւղացիութեան ու հոգևորականութեան միջև:

Այն ժամանակ, երբ հոգևորականութիւնը աղնուականութեան պէստէր էր ընդարձակ կալուածների, որսնցում բնակում էին գիւղացիները, հոգևորականութեան ու գիւղացիութեան յարաբերութիւնը կալուածատիրոջ ու հողը մշակող աշխատաւորի յարաբերութիւն էր. որի ժամանակ նրանք հակադիր շահեր ունեին. ինչպէս հասարակ աղնուականն ու գիւղացին. Այն ժամանակ հոգևոր դասը այսողէս չէր ծանրացած գիւղացիութեան մէջըին:

Իսկ յետոյ, երբ հոգևորականութիւնը համարեա բոլորովին զրկուեց իւր հողացին սեփականութիւնից և իւր ապրելու միջոցները իբրև եկեղեցական տուրքեր ձեռք էր ըերում լոկ իւր կոչման շնորհիւ, — գիւղացիութիւնն էր գլխաւոր դասակարգը, որ պէտք է ապրելու միջոցներ մատակարարէր նրան. Իրերի այսպիսի գրութիւնը անշուշտ աւելի զգալի պիտի լինէր գիւղացու համար. որանից պիտի առաջանար լարուած վերաբերմունք գէպի եկեղեցական դասը, որը առանց ֆիզիքական աշխատանք գործադրելու օգտւում էր նրա աշխատանքի արդիւնքներից:

«Ի՞նչ կուղէ ասին, — գիտում է Աղասին կարգաւորների մասին, — ես իմ կոպիտ գլխովը էնպէս եմ կարծում, նհախ տեղը՝ դատած մալը

ուտիլը ու դարտակ քնիլը հարամ առ Մարդ պէտք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ ըլից: *)

«Բանը էն չի, որ մարդ ծէքը տալիս գնայ ժամը, մէկ երկու ծունը դնի, դուս գայ, մի քիչ դրին մտիկ անի, արըշտոտայ, քունը տանի, կակող բարձի վրայ, զույթուքի եօրդան դօշակում երկար ձգուի, ուտի, խմի, քէֆ անի, փորն ու գլուխը հաստացնի ու գայ մեր ջանին ընկնի, թէ ինչ որ դատէլ էք, էն էլ մեզ տուէք, որ տանենք, լաւ ուտենք, լաւ հագնենք, լաւ մաշենք, ձեզ համար աղօթք անենք: Ախպէր, բաբա, ջանըմ, գեօղըմ, աղօթք ունիս, քեզ համար պահի, քեզ հմար արա: Ի՞նչ ես տուել, որ մեզանից չես կարում ետ առնել: . . . Քեահլան ձիու վրայ իրանք են նոտում, խաս ու զումաշ իրանց հագին ա, զարշ լու փղաւ ու հազար տեսակ անոշ կերակրներ, խմիչք իրանք գործ ածում, բանըդ կուշտն (մօտը) ընկած վախտը ուղում են գլուխդ վէր բերեն: Տօ հէնց վող պէտք է տամ, որ հոգիս դրախտ դնանյա: **)

Մեծ գժգոհութիւն է արտայայտուում նաև գիւղական քահանայի մասին խօսելիս:

«Ամէնը հօ ամէնը, իլահիմ մեր տէր Մարկոսը, որ առաւօտից մինչ րիգուն փիլոնն ուսին քցած, փոխանը վեր քաշելով, հողաթափը ծըփէ վացնելով կամ քօշերը քստքստացնելով, քու-

*) «Վէրը Հայաստանի», եր. 26.

**) Նոյնը, եր. 40—44.

ցին քուցին անելով, մէկ դադանակ ձեռին, լոնդի
(երկար) տէրոզորմէն շխշխկացնելով, քուչէքը
չափելով, մէկ մեռել կամ կնունք, շիլավլաւ կամ
մատաղ պատահելիս մէկ էլ էն ես տեսնում, որ
հազարով, փռշտալով, ոտին գլխին անելով, գոնե-
րը ջարդելով, կոտրատելով, ափալ թափալ ներս
ընկաւ, հոգէառ հրեշտակի պէս էկաւ, թունդրի
զրադը կտրեց, իրան իրան նստեց, արադ մազա-
ռւզեց, ու հէնց իմանաս, մեռելի կէս հոգին
ինքն առևզում հանիւ Դեռ պատանը չկարած,
չլուացրած, շուտով թաղումելէքն ու կողոպուտն
առևզում.... Մէկ հացկերոյթ ըլելիս սուփրի
գլխին ինքն անստում, հինդ մարդի զդար հաց
ուտում, տկի հոտն առնելիս փորը զըլուըլոց
ընկնում։ Տօ, քո տունը չքանդուի, քո տունը,
հօ սոված չմեռար, ոյ խանի խարար, ի՞նչ էլաւ
քեզ, մարդի փորը հօ դժոխք չի, որ իրան ու-
տիւ Սար ու ձոր տէրտէրի փոր, ի՞նչ զորդ են
ասել է»^{*})

Սակայն չպէտք է կարծել, թէ գիւղացիու-
թեան վերաբերմունքը կարող է սրանից շատ հե-
ռու գնալ։ Նրա բողոքը չէ ուղղուած այն գա-
ղափարների դէմ, որոնց կրօզն է հանդիսանում
հոգեսրականութիւնը։ Ոչ Այս կողմից գիւղա-
ցին հանդէս է գալիս չափազանց յետագէմ, նոյն
իսկ ճգնապաշտ հայեացքներով։

«Սեանու ճգնաւորներն են լաւ կարգաւոր,
ի՞նչ խօսք ունիմ, բաժակի, մսի համ չեն տես-

*) «Վերը Հայաստանի», եր. 25.

նում. Հագածները բուրդ առ շալ. չոր գետնի վերայ են քնում, երեսներիցը լիս ավեր թափում, տաս, էլի կօրհնեն, չտաս, էլի կօրհնեն։ Մօտք մտած ժամանակը Աստուծոյ բան են խօսում, կնկայ երես տեսնելիս հօ՝ երկու վերստճամփայ հեռու են փախչում։*)

Գիւղացու՝ դէպի հոգեորականութիւնն ունեցած վերաբերմունքի բոլոր կողմերն սպառած չենք լինիլ, եթէ չաւելացնենք, թէ ի՞նչ կուլտուրական պահանջ ունի նա եկեղեցական դասից։ Նրա պահանջն է—լինել ուսուցիչ և առաջնորդ երկրային կեանքում, որի փոխարէն գիւղացին պատրաստ է ամեն ինչ վճարել։

«Երէխէքս չորան դառած ման են գալիս, նրանց դառդը չենք քաշում, որ մէկ այբբեն էլա, մէկ ճղի-բզի սովորցնեն, հէնց իրանց ֆիքրն են քաշում։ Էդպէս հօ չի ըլիլ»:**)

«Որդի, էրէխայ իշի պէս մենձանում են, նրանց հոգսը չեն քաշում, վարժատուն չեն բաց անում, չեն կարդացնում. հէնց ուզում են, թէ մեր դատածը խլեն»***)

«Ճօ փող էլ ուզես, կտամ, չունենամ—գլուխս կծախեմ, քեզ կպահեմ, թաք ըլի՝ էնպէս բան ասես, որ խելքումս մտնի. իմ հաւարին հասնիս,

*) «Վէրք Հայաստանի» 40.

**) Նոյնը, եր. 25.

***) Նոյնը, եր. 44.

էն ժամանակը հոգիս ուղես, քեզ թասիր չեմ
անի՛, չեմ»*)

«Թող ինձ կարդացնեն, որդուս ուսումն տան,
մեզ ճամփայ շհանց տան, ճամփից, հաւատից
չհանեն, սատանի փայ ըլիմ, մէկ բուռ հողի, մէկ
գաղ կտաւի, ժամ, պատարագի հասրաթ, թէ
աչքս ուղեն, չհանեմ, իրանց տամ, որդիս ուղեն,
չմորթեմ, մատաղ անեմ»**)»

X.

Մինչև այժմ մեզ հետաքրքրում էր, թէ
ինչ Արովեանի վէպի բովանդակութիւնը և ինչ
պիսի աշխարհահայեցք ունէին գիւղական կեան-
քի ներկայացուցիչները։ Այժմ մեզ մնում է պար-
զաբանել վերջին խնդիրը, այն է, թէ ինչպէս է
վերաբերում ինքը հեղինակը վերոյիշեալ երեք
հասարակական խմբերին, և որանցից որի կողմն
է նրա համակրութիւնը։

Որևէ է հեղինակի դէպի մի դասակարգ ու-
նեցած վերաբերմունքը պարզելու համար մեծ
նշանակութիւն ունի որոշել, թէ ընդհանրապէս
ինչ կողմերով է երեան հանում այս արուեստա-
գէտը այն հասարակական խմբի կեանքը։ Երբ
հեղինակը որևէ է դասակարգի կեանք պատկերաց-

*) «Լէրը Հայաստանի» եր. 25:

**) Նոյնը, եր. 42.

նում է ընդհանրապէս գրական կողմերով, այլ ևս կասկած չէ կարող լինել նրա համակրօնան վերաբերմունքին գէպի այն դասակարգը։ Որքան էլ որ հեղինակը նիւթի մշակութեան ժամանակ նոյն իսկ ծայրայեղորէն հաւատարիմ մնայ օքեկտիւ պատկերացման սկզբունքին, այնուամենայնիւ նիւթի այդպիսի ընտրութիւնը արդէն չէ կարող թագցնել, որ հեղինակը համակրութիւն է տածում գէպի կեանքի այս շնչանը։

Առդ Արտվեանը, որ վէպի համար նիւթ է ընտրել գիւղական կեանքը, ինչ կողմերով է պատկերացնում այն, գրական թէ բացասական։

Ով գոնէ մի անգամ կարդացել է «Վէրք Հայաստանին» նոյն իսկ թռուցիկ կերպով, չէ կարող կասկածել, որ այդ վէպի գիւղացի հերոսները դանաղան բարեմասնութիւններով օժտուած են հանդէս գալիս։ Օրինակ Աղասին հնագանդ է, հեղ, հարևաններին օգնող, աղքատասէր, կենսուրախ, խելօք ու քաջ։ Թագուհու յատկութիւններն են՝ հրեշտակային անմեղութիւն, կուսական ծայրայեղ ամօթխածութիւն, դարձեալ աղքատասիրութիւն և ծնողասիրութիւն։ Քէղախուդաների մասին խօսելիս նկատում է աշխատասէր, հիւրասէր ու առատաձեռն լինելը։ Գիւղական կեանքից առած հերոսներից երկուոք—Աղասին ու Թագուհին—նոյն իսկ ծայրայեղ իդէալականացման են հնթարկուած։ Աղասին ընաւորութեան նկարագիրը հանրածանոթ է, որովհետեւ նոյն իսկ դասագլքերում տեղ է գտել, ուստի

կարիք չենք համարում մէջ բերելու. իսկ թագուն
հունկարագրութիւնից ահա մի հատուած, որտեղ
կարծէք մի չնաշխարհիկ էակ է պատկերացուած.

«Ծաղկներն էլ, հէնց իմանաս, նրա ոտի ձէնն
առնելիս ուրախանում, ցնծում, բացւում փշըզում
էին. Ղշերն էլ նրա երեսը տեսնելիս, հէնց բռնիր
նոր հոգի էին առնում, գլխըները թեերի տակից
բարձրացնում, ճխում, ճշում, ծլուըլում, թեերին
խփում, ծափ տալիս: Զեռը դառան գլուխը քսելիս
եա շփելիս, հէնց գիտես, թէ էս անմեղ հայուանն
էլ էր իմանում, որ հրեշտակի ձեռք ա իրեն դիպ-
չում և ոչ մարդի: Մի քիչ մօտիցը պակսելիս
ձէնը աշխարք էր վերցնում, մարդու սիրտ էրում,
էնպէս էր բզզում, քար ու քոլ ընկնում: Շատ
անգամ նրա փափուկ ծնկան վրայ էր քնում,
նրա անուշահոտ, ազիզ ձեռիցն էր խոտ ուտում:
Զայիր-չիմանի, մանիշակի վրայ, վարդի, թթենու
տակին, եա քչըզան առուի մօտ որ բաղի վախտ
քնած չէր ըլում, հէնց իմանաս, երկնքիցը լիս ա
զէր եկել, ափնիքը հայլի դառել: . . . Շատ ան-
գամ վարդի փունջը մէկ ձեռին, մանիշակինը մէ-
կէլ, աչքը որ չէր բաց անում, հէնց գիտես, սար,
ձոր, ծառ, թուփ, խոտ, ծաղիկ նրան էին մաթ
մնացել, նրա շունչն ըլէին ուզում, որ քաշեն,
ծծեն, զօրանան, դալարին: Հովը մազերի վրայ
սլալալիս, երեսին դիպչելիս էլ չէր ուզում, որ
առաջ խաղայ եա ետ գնայ. հէնց նրա գլխովն
էր պտըտում, հէնց նրա մազերի հետ խաղում:
Վարդի վրայ երեսը կուացնելիս ուզում էր, որ

բարձրանայ, նրա շունչը քաշի, նրա պատկերի գունը գողանայ, որ դհա աւելի գեղեցիկ, դհա անուշահոտ երևիւ Բլբիւլը նրա հոտը առնելիս իր վարդը մոռանում, նրան էր գովում, նրա վրէն էր իր սէրը թափում, նրա հասրաթովին էր ուում, խորովուում։ Շատ անդամ ինքը ձէն հանելիս, եա ինքն իրան խաղ ասելիս հէնց իմանում էր, թէ հրեշտակներն են իր հետ խօսում, իրան ձէն տալիս, եա ձէնը քաշում։ Առաւօտեան ցողը, իրիկուան վերջի լիու՝ մէկը նրան տեսնելիս ցնծալով վեր էր գալիս, որ նրա սուրբ երեսին նստի, մէկը ցաւելով երեսն իրան էր քաշում, աչքը խփում, որ նա շուտով քուն մտնի, գիշերն անց կենայ, որ առաւօտն էլի գայ, նրա տեսութեան արժանանայ, նրա լուսովը հոգի առնի ու զուարճանայ։ Քունը նրա աչքերին էնպէս էր մօտանում, ինչպէս մէկ սրբի՝ երկնային հրեշտակը։ Թևերն երեսին փուում, անմահական երազով նրան գրկում, արթնացնում, էլ ետ իւր գիրկը գնում*):

Արովեանը այսպէս հիացած է ոչ միայն գիւղի ներկայացուցիչներով, այլ և նրանց տնտեսութեամբ։ Այստեղ էլ նկարագրութիւնը նա այնպէս է տանում, որ համարեա ամեն քայլափոխում զգացուում է, որ նրա գրածը ոչ թէ օրիեկտիւ նկարագրութիւն է, այլ «ի խորոց սրտի» փառաբանութիւն։ Ընթերցողի մտքից բոլոր կասկածները փարատելու համար մէջ ենք բերում

*) «Վէրը Հայաստանի», եր. 65—67.

գիւղական տնտեսութեան, լիութեան ու ընտառնեկան կեանքին վերաբերեալ էջերից մի քանի հատուածներ։ Առանձին ուշադրութեան արժանի է նկարագրելու եղանակը։

«Տունն ու շիրախանէն հազար բարութիւնով լիքը տրաքում էին ու Աստուծոյ հոգի կար մէջը-ներում։... Գինին կարասներով շարած ևն... մառանը եմիշով, կախանով, տանձ ու խնձորով խլթխլթում ու մոնտոյին հոտը տեղն ու տեղը ըռնում շշմացնում էր։ Նրա հարսն ու փեսէն կամ մէկ ազիդ զոնադ, որ գլուխը բարձին չէր դնում էս անմահական բարութեան մէջը, Էնպէս իմանում էր, թէ դրախտումն ա աշըը խփում կամ բաց անում։ Որը երկու, որը երեք բաղ ու-նէր, նոքար, հօտազ գուանը հազիւ, ու տան նե-րսն ու պուճախը դըմքում էր։ Կարասներով կո-ղակ. կճճներով պանիր ու զաւուրմա, աքաշներով զոխ, բոխ, ողորմակոթ, բղըղներով եղ ու կարաք, մոթաներով պանիր. — ծիկ, ի՞նչ տուն։ Տաօր զո-նադ որ էն սհամեց նրա գուանը վեր գային, սաղ ամիս ուտէին, խմէին ևն... նրա տան խէրն ու բարաքեաթը հա կար, հա կար։... Մէկ փարի բան բազարիցը տուն չէր գալ, բացի իրենց հագնելու շորիցը, Էն էլ կտաւ, շապկացու, չու-խացու, շտոր հարսներն ու աղջկերքն էին նրանց համար մանում, գործում, կարում։ Նրանց կնա-նոնցը որ մտիկ տայիր, խելքդ կերթար, խաս ու զումաշի միջում կորած էին.... Մէկը մէկի ջգրու շատ անդամ իրանց օղլուշազին Էնպէս էին ծաղ-

կում՝ զարդարում, ինչպէս զարնան վարդը: . . . Եատը չօրս հինգ հարսն ուներ տանը, որ մէկ տեղը ցաւելիս ուզում էին գլխովը պտիտ գան ու ոտները կում անեն խմբն: . . . Մէկ բան ուշ դելիս՝ ոտի տեղ զլիսի վրայ էին զնում; որ նրա ասածն անեն ու ձեռըները դոշըներին դրած աջըը կթած ունեին, որ տեսնեն թէ իրանց տէրը կամ զոնազը ինչ կհրամայի, որ կատարեն: Կեսուրը կամ կեսառը մէկ աջըը քցելիս ուզում էին տեղն ու տեղը հալչին, էնքան հնազանդ էին:*)

Գիւղական կեանքի այսպիսի պատկերացմանը չէր կարող յաջորդել քաղաքային կեանքի փառաբանութիւնը: Եւ երբ Արովեանը գիւղական կեանքի այսպիսի ջատագովումից անմիջապէս յետոյ նկարագրում է գիւղացու բերանսվ քաղաքի կեանքի քացասական կողմերը իսկոյն զգացուում է, որ հեղինակը խրախուսում ու ծափա՛մարում է իւր հերոսին: Ուրիշ ամեն դէպքերում վէպը ընդհատող ու գատողութիւններ տուող Արովեանը այս գէպքում լուռ է մնում բոլորովին ու դրանով ցոյց տալիս, որ լոռութեան պատճառը համաձայնութիւնն է: Ասածներս հաստատում են մի ուրիշ կէտով էլ:

Վերեւում մենք բերել էինք գիւղացու խոհ հերից մէկը. «Հմիկ կովը վեր են քաջում, որ տեսնեն թէ տակին եարար ֆորթ կայ, թէ չէա: Արովեանը վէպի մէջ մի տեղ նկարագրելով, թէ «դդալ, շանգալ դանակի ոտը դեռ մեր աշխարքը

*) «Վերը Հայոստանի», եր. 54—56.

չի մտել, կերակուրներն էլ մէկ սինով են ներս
բերում, հացից ետք էլի ջրով որ ձեռք ու բերան
չողողեն, չուանան, կերածը հարամ կըլի, գդակ
վերցնել սեղանի վրայ, եա գլուխ տալ ադաթ
չի», — աւելացնում է. «Երկրի ծէսն էսպէս ա,
Եւրոպա չի, որ կովը վեր քաշեն, տեսննն տա-
կին ֆորթ կայ, թէ չէ»:*) Ընթերցողը ինքն էլ
տեսնում է, որ «գդակ չվերցնելու», «Երկրի ադա-
թի» համար «Եւրոպայի կով վեր քաշելն ու
ֆորթ փնտռելը» մատնանշելը տեղին չէ. Աբո-
վեանի այդ յաւելուածը մի զուարճալի անկա-
պակցութիւն է.

Բայց այդ յաւելուածը մեզ համար շատ
նշանակալից է, որովհետեւ ցոյց է տալիս, որ
ինքը Աբովեանն էլ անբաւական է այն կարգե-
րից, «որտեղ կովը վեր են քաշում, տեսնեն՝ տա-
կին ֆորթ կայ թէ չէ»:

Դառնացած գիւղացին ոյս բառերով բնու-
րոշում է իւր երկրի քաղաքի մարդկանց, քա-
ղաքի, որտեղ զարգանալ է սկսում փողային տն-
տեսութիւնը:

Դժգոհ Աբովեանը նոյն բառերով մատնա-
ցոյց է լինում առևտրական ու արդիւնաբերող
եւրոպայի շահասէր ձգտումների վերայ:

Քանաքեռոցի վիպասանը և Քանաքեռի քեթ-
խուդան միևնոյն աշխարհահայեացքի ներկայա-
ցուցիչներ են:

*) «Վերը Հայաստանի» եր, 34—35.

Վէպի մէջ գիւղացու բերանով խօսում է Արովեանը, իսկ գրականութեան մէջ յանձին Արովեանի խօսում է գիւղացին:

Մի քանի խօսք էլ վիպասանի վերաբերմունքի մասին գէպի հոգեորականութիւնը: Մենք միշտ գիտմամբ շեշտում ենք — գէպի հոգեորականութիւնը, որովհետեւ ինչպէս գիւղացին, այնպէս էլ Արովեանը, եկեղեցու գէմ չեն, այլ ժամանակակից եկեղեցականների:

«Մէկ ազգը պահողը լեզուն առ հաւատը, թէ սրանց էլ կորցնենք, վայն եկել ամեր հալին»*) — դատում է նա: Մի ուրիշ տեղ.

«Որ ջան անինք, մէկ գլեկու սիրենք, մեր լեզուն, մեր եկեղեցին էնպէս զայիմ բռնենք, ինչպէս մեր երջանիկ նախնիքը, հաւատացիր ինձ, Աստուած էլ կորի մեզ, մարդն էլ»:**)

Տեսանք, թէ հեղինակը ինչ համակրութեամբ էր վերաբերում գիւղացիներին, նրանց տնտեսութեանը, ընտանիքին. բայց հէնց որ խօսքը փոխուում է գիւղացու տգիտութեան, անկրթութեան մասին, ահա ինչ լեզու է գործածում նա.

«Եշ գեղցի ըլելով, գլուխը հաստ, ծուծը՝ բարակ, անտաշ, կողիտ, ոչ վարպետ էր տեսել, ոչ վարժատուն. ձիու տակը սրբելուցը, մաճը բռնելուցը, հանդը վարելուցը ու կատեղանութիւնից աւելի ոչինչ բան չէր գիտում: . . . Թէ-

*) «Վէրք Հայաստանի», յառաջաբան եր. Ժ.Ա.

**) Նոյնը, եր. 95.

կուղ գեղցցին, թէկուղ եաբանի հայուանը մի հեսաբ առ...*)

Լուսաւորել այդ գիւղացուն — ահա Աքովեանի պահանջը հոգեորականութիւնից, խօսելով գիւղացի տգէտ քահանաների մասին՝ նկատում է,

«Ամենըս էլ չաւ գիտենք, թէ ում մեզքն ա, ամա հիմիկ խօսալու վախտը չի, եղոյ կասեմ. ինչ ասեմ, իմացողն իմացաւ ու ականջի տակն էլ բարքի թէ քորեց...» **)

Իսկ յետոյ շատ ու շատ պարզ ասում է.

«Ամեն մեշրդի հայաթում գեղ տեղարենքն էլ մէկ մեծ վարժատուն կայ, որտեղ երկու երեք լեզու են սովորում. մեր եկեղեցը բանց հայաթներումը լագլագն էլ բուն չի դնիլ. բաս ինչ կը ի, որ ազգի սիրան էլ քիչ-քիչ չի հովանալու***)

XI.

Ի՞նչ հետեանքների հասանք այս գրական պատմական վերլուծութեան ժամանակ:

Տեսանք նախ, որ 19-րդ դարի առաջին տասնամեակներում տնտեսութեան գրութիւնն ու հասարակական խմբերի որոշ գասաւորութիւնը պատճառ դարձան գիւղացիական գրականութեան հիմքը գնելուն. երկրորդ, որ տնտեսութեան եղանակների ընդհարումը և ոսցիալական տար-

*) Ա.Ե.րք Հայաստանի, եր. 26.

**) Նոյնը, եր. 20.

***) Նոյնը, եր. 96.

ըերի յարաբերութիւնները գիւղացիական աշխարհաճայեացքին տուել էին յայտնի կերպարանք և երրորդ, որ Արօվեանը այդ շրջանի զուտ գիւղացիական աշխարհաճայեացքի ներկայացուցիչն էր։*)

Այս հետեանքները անակընկալներ են մեր գրականութիւնն ուսումնասիրողների համար, այս անակնկալները պարտական ենք մի յայտնի մեռթողի, որ գրական երեսյթների պատճառը տնտեսական-սոցիալական երեսյթների մէջ է որոնում։ Այդ մեթոդը մինչև այժմ չէ գործադրուել մեզանում. սակայն «վէմը, որ անարգեցին շինողները, նա կինի գլուխ անկեան»։

Մի քանի խօսք էլ, և վերջացնենք։ Մինչև այժմ մեզանում անթիւ են այն մարդիկ, որոնք սոցիալական տարրերի մրցումը յատուկ են համարում Եւրոպային, այլ ոչ մեր հասարակութեանը։ Նրանց յատկապէս սխալացնում է այն, որ մեր նոր պատմութիւնը հասարակական խմբերի քաղաքական ընդհարումներ չէ յիշատակում։ Սակայն այս փաստ չէ։ Քաղաքական անկախու-

*) Եւրոպական զրողներից աշխարհաճայեացքով ամենից աւելի մօտ է Արօվեանին Թուսսօն, որ կողմնակից է փոքր հողային սեփականութեան, գերազանց է համարում իւր համար արտադրող եւ սպառող փակ տնային տնտեսութիւնը, ջատագով է նահապետական ընտանիքին ու կարդերին եւ ճակառակ է քաղաքային կեանքին, վաճառականութեան ու արդինարերութեան դարձացմանը։ Հմմտ. Պրօֆ. Ռ. Վիպերъ. «Общественныея ученія и историческія теоріи XVIII и XIX в. в.» Москва, 1908. յատկապէս եր. 72—78.

թեան բացակայութիւնը թոյլ չէ տուել, որ մեր հասարակական տարբերի մրցումը քաղաքական ընդհարման կերպարանը ստանայ։ Բայց միթէ այդ նշան է, որ քաղաքական ընդհարումների հիմքը, այն է՝ տնտեսական ու սոցիալական մրցումը նոյնպէս բացակայում է։ Երբ գետը կատաղի յորձանքներ չունի, միթէ այս ցոյց է տալիս, որ նա չէ հոսում։ Հէնց մի գեղարուեստական երկի վերլուծումը, Աբովեանի վէպինը, երեւան է հանում, որ մեր հասարակական կեանքում էլ գոյութիւն է ունեցել տնտեսութեան տարբեր եղանակների ու սոցիալական խմբերի կռիւը։ Այդ կռիւը, դասակարգային մրցումն անցել է գրականութեան մէջ։

Աբովեանը դասակարգային մարտիկներից մէկն է, նա գիւղացիութեան իդէոլոգն է և, ինչպէս իւր սոցիալական խումբը, կռիւ է մզում երկու ֆրոնտի վերայ։ Որչափով որ վիպասանը կռուում է աջ թեի վերայ, քննադատում է հին կարգերը, այն չափով նա առաջադիմական է, իսկ որչափ որ սուր է շողացնում դէպի ձախ, դէպի նոր կարգերը—դէպի փողային տնտեսութիւնն ու վաճառականութիւնը,—այն չափով էլ յետադիմական է։

1910, մայիս.

Դաղարշապատ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Առաջաբան

	Երես.
I. Դասակարգ ու գրականութիւն . . .	3.
Բ. Տեսեսական—սոցեալական միջավայր	
II. Հոգևորականութիւնն Արովեանի ժամանակ	6.
III. Վաճառական դասն Արովեանի ժամանակ	10.
IV. Գիւղացիութիւնն Արովեանի ժամանակ	12.
Գ. «Վերք Հայատանի»	
V. Գիւղը վէպի մէջ: Վէպի առաջին գլուխը	18.
VI. Վէպի միւս գլուխները: Վէպի մասերի արժէքը	27.
Դ. Գիւղացիական աւխարհահայեացք	
VII. Գիւղացու վերաբերմունքը դէպի երկրագործական աշխատանքն ու գիւղական կեանքը	29.
VIII. Գիւղացու վերաբերմունքը դէպի հողային տնտեսութիւնն ու վաճառական դասը	38.
IX. Գիւղացու վերաբերմունքը դէպի հոգևորականութիւնը	43.
Ե. Հայ գիւղացու իդեոլոգը	
X. Արովեանի վերաբերմունքը դէպի գիւղական տնտեսութիւնը, վաճառականութիւնն ու հոգևորականութիւնը	48.
Զ. Վերջաբան	
XI. Մեթոդ ու հետևանքներ	56.



